№ 146 ՇԱԲԱԹ 6 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 6 ՅՈՒԼԻՍԻ № 146

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՅՈՒԼԻՍԻ 1-Ից ՄԻՆՉՄԻ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՇԵՏՆԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կոպիսից դուրս գտնվող անձերի և հիմարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Ղարիսում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԱՏԱԼԻԱ, ԴԱՒԻԹ, ԵՂԻՍԱԲԷԹ ՍԱՐԴԱՐԵԱՆՆԵՐԸ, ԱՆՆԱ, ԱԲԳԱՐ ՅԱԿՈԲԵԱՆՆԵՐԸ, ՆԻՆԱ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԸ, ՄԱՆՈՒԱԿ և ԳՐԻԳՈՐ ԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր թանգագին որդու, 2-րդը՝ սիրելի եղբօր, 3-րդը՝ տագեր, 4-րդը՝ եղբօր, 5-րդը՝ մօրեղբօր և 6-րդը՝ իր քեռու՝

ԱԴԱՄ ԹՈՎՄԱՍԵԱՆ
ՍԱՐԴԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ յուլիսի 1-ին, առաւօտ. ժամը 4-ին։ Թաղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 7-ին, առաւօտ. ժամը 10-ին, իր բնակարանից, Ելիզաւետինսկայա փող. № 94, դէպի Վանքի աւագ-եկեղեցին։ Ամբիծքը ամեն օր, երեկոյեան ժամը 7-ին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

546. (2.) 2—2

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Բերլինից հեռագրում են, որ, լուրերի համաձայն, արտաքին գործերի մինիստր Սազոնովը սպառնում է Թիւրքիային գրաւել Հայաստանը, եթէ նա կը փորձէ անցնել բոլգարական սահմանը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—o—

ՀԱՑՈՑ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ*)

(Նիստը շարունակվում է Զալիսնկիի նախագահութեամբ)

—

Սանկտպետերբուրգեան հասիւ յուլիսի 6-ի նիստի

Պապաջանեանի ճառի շարունակութիւնը

(Բագուի, Գանձակի և Երեւանեան նահանգների պատգամաւորը)

Ռուսական այդ անվեհեր ճանապարհորդը համարձակութիւն ունեցաւ ներկայումս անցնել Թիւրքահայաստանով, որպէսզի անմիջական տպաւորութիւն ստանայ այն բանից, թէ ինչ է կատարվում այնտեղ։ Ի նկատի ունենալով այն անարխիան, որ գոյութիւն ունի այնտեղ, այդ քայլը նրա կողմից, իսկապէս, հանդիսանում է հերոսական։ Օլդէնինը, պաշտօնական անձնաւորութեան, հիւպատոսի, խօսքերով, այսպէս է նկարագրում Դիարբէքիրի դրութիւնը։ Երեւում է, որ Դիարբէքիրի շրջանում կայն վեց վանքեր, նրանցից երկուսը քանդված են։ Կային 98 եկեղեցիներ, որոնցից 59-ը քանդված են։ Իսկ այնուհետեւ հէնց այդ Դիարբէքիրի շրջանում քիւրդերը տիրապետեցին հայկական հետեւեալ կալուածները՝ 37 տուն, 87 խաղողի այգի, 5 ջրաղաց և 1147 հողամասեր (աղմուկ)։

Նախագահ.—Խնդարհարաբ խնդրում եմ չաղմկել։

Պապաջանեան... Իսկ այնուհետեւ Սիլվանի կազայի տասը և Բէշիրում՝ երեք գիւղերից բոլոր հայ գիւղացիները դուրս են քշված, իսկ գիւղերը յետոյ քիւրդերի ձեռքն են անցել։ Ահա հողային այն դրութիւնը, որի մէջ գտնվում են հայերը։ Դուք հասկանում էք, թէ ինչու նրանք պէտք է գաղթականութեան դիմեն, որովհետեւ տեղերում մնալու ոչ մի ոյժ չը կայ։ «Бирж. Вѣд.»-ի հէնց նոյն թղթակից Օլդէնինը նկարագրում է հայերի տարերային գաղթականութիւնը, որը սպառնում է դատարկել այդ երկիրը հայ էլեմէնտից։ Նա բերում է հէնց նոյն Դիարբէքիրի օրինակը, ուր անցեալ դարի սկզբում 8000 հայ և 8000 թիւրք կար, իսկ այժմ հայեր մնացել են 5000, իսկ թիւրքեր 22,000։ Այդ ընդհանուր պատկերն է, որը նկատվում է ամենուրեք. այդ պիսով մաքրվում է տերբիտօրիան հայ ազգաբնակութիւնից։ Այնուհետեւ ինչ պիտի անէր տեղական հայ ազգաբնակութիւնը։ Ի՞նչպիսի միջոցներ նա պէտք է ձեռք առնէր։ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը ու պարիարքը դիմում են, ի հարկէ, իրանց պետութեան՝ Թիւրքական կառավարութեան։ Թիւրքիայի պատմութեան ամբողջ ընթացքում հայ ազգաբնակութեան այդ ներկայացուցիչները երբէք չը փոխեցին իրանց յարաբերութիւնները. այլ կերպ, ինչպէս որ Թիւրքիայում, նրանք ոչ ոքի չը գիմեցին։ Եթէ որ ցոյց տրվէր նաև այն, որ 1876—1877 թուականներին տեղի ունեցան այդպիսի միջոցներ Ներսէս պատրիարքի կողմից, ես պէտք է ասեմ, որ այդ կատարվեց Թիւրք կառավարութեան ցանկութեամբ, որը այդպիսով, խաղալով հայերի բնական զգացմունքների հետ, ստեղծեց աւելի խառնաշփոթ դրութիւն, Անգլիայի համաձայնութեամբ, որը չէր կամենում, որպէսզի Հայաստանը, ճանապարհ բացող դէպի Հնդկաստան, ընկնէր Ռուսաստանի ձեռքը։ Չը ցանկանալով, որ Մակեդոնիայում բարենորոգութիւն մտնի, հարցը բարդացնելու համար մուծվեց նոր տարր և ցանկութիւն յայտնվեց, որ ըէֆորմը տարածվի Հայաստանում։ Միւս կողմից Ռուսաստանում հայկական ինտելիգենցիան և հասարակութեան ներկայացուցիչները գործ են դնում բոլոր ջանքերը, որպէսզի դրդեն կառավարութեանը, վերջապէս, միջոցներ ձեռք առնել դադարեցնելու անիշխանութիւնը Հայաստանում։ Ցիշատակելի է դեռ 1876 թուականին հայ ազգաբնակութեան դիմումը փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչին և ապա նրա միջոցով Թագաւոր Կայսր Ալէքսանդր II-ին։ Ինչպէս դուք գիտէք, 80-ական թուականներից դրութիւնը փոխվում է և Ռուսաստանը հրաժարվում է իր նախկին քաղաքականութիւնից նոր պայմանների դրդումով և աւելի ուշ այն քաղաքականութեան ճնշման տակ, որն ընդունված է կոչել Լօրանօվ-Ռոստովսկիի քաղաքականութիւն։ Ի՞նչ է անում հասարակ ժողովուրդը։ Նա Ռուսաստանում դիմում է իր սեփական ոյժերին, այդ շարժումը պաշտպանում է նաև Թիւրքահայաստանում։ Բայց միևնոյն ժամանակ էլ Թիւրքահայաստանի հայ ազգաբնակութիւնը չէ թողնում իր ծանրացումը Ռուսաստանի կողմը. բայց միակ բանը, որ նրանց մնաց, դա դիմելն էր իրանց ոյժերին։ Այն ժամանակ կազմվում են հրոսակախմբեր և փոքրիկ ազգը լարում է իր բոլոր ոյժերը, որպէսզի պահպանէ իր ֆիզիկական գոյութիւնը։ Այդ հողի վրա էլ հիմնվեց Դաշնակցութիւն կուսակցութիւնը, որը իր վրա վերցրեց Թիւրքահայերի գոյութիւնը պաշտպանելու հարցը Թիւրքահայաստանում։ Դուք գիտէք, թէ այնուհետեւ ինչպէս վերաբերվեցին դրան ռուս իշխանութիւնները։ Այդ կազմակերպութեան ստեղծվելու հէնց առաջին օրերից նա հետապնդումների է ենթարկվում։ Ամենամեծ չափով զարգացաւ այդ հետապնդումը այն ժամանակ, երբ Դաշնակցութիւնը հանդուգնական ազատագրական շարժման ճնշման տակ ձեւականորէն ընդունեց այն ծրագիրը, որն այժմ նրա բոլոր անդամներին դատապարտութեան է ենթարկել։

Կոմս Բօբրինսկին խօսելով դէպի Դաշնակցութիւնն եղած վերաբերմունքի մասին և յիշատակելով պրօցեսը՝ ասաց, որ Պետերբուրգում դեռ կան դատաւորներ։ Ինձ թւում է, որ յանդիմանութիւն շպրտելով Պետական Դումայի անդամ Միլիւկովի հասցէին, որը մատնանշեց դէպի այդ կուսակցութիւնն եղած հալածանքները, պէտք է յիշել, որ չը պէտք է բաժանել այդ կուսակցութեան պատմութեան այն մասը, որը վերջացաւ այստեղ Սենատի դատով, և միւսը, որը կայանում էր քննիչ Լրժինի ապա, ոչ ոքի կողմից չը դադարեցված չարագործութիւնների մէջ։ Դժուար է նկարագրել այն տանջանքները, որ կրեցին հարիւրաւոր մարդիկ, երկար ժամանակ ի զուր տեղը պահվելով բանտերում. դժուար է նկարագրել նրանց ծանր կացութիւնը։ Երբ որ դատապարտեալների ցանկութեան հակառակ այստեղ դատ նշանակեցին, յանձին կառավարիչ սենատի յատուկ ատեանի, երեւաց, որ անբաւականութիւն առաջ բերած կարգադրութիւնը բաղդաւորութիւն էր բազմաթիւ անձանց համար, որոնք դատի էին ենթարկված։ Պէտք է խոստովանել ճշմարտութիւնը, որ կառավարիչ սենատի յատուկ ատեանի նախագահը ցոյց տուեց հաստատակամութիւն և ազնուութիւն այն մօմենտում, երբ այդ կուսակցութիւնն ամեն կերպ հալածում էին, երբ կառավարութեան քաղաքական նշանաբանն էր ճնշել այդ կուսակցութիւնը. նա արիութիւն ունեցաւ դուրս ձգել կեղծիքները, որ կատարել էր Լրժինը։ Բայց մենք գտնում ենք, որ գտաբանի այդ որոշումը ճշդօրէն չէ կայացել. մենք այն համոզմունքն ունենք, որ մեղադրեալների մեծամասնութիւնը դատապարտված է ոչ արդարացի. եթէ որ ամբողջ մի շարք մարդկանց վերաբերմամբ կեղծիք կար, ապա ինչու կանգ չը պէտք էր առնել այն հարցի վրա, թէ կեղծ կարող են լինել նաև մնացած շատ ցուցմունքներն ու փաստերը, որոնք այն ժամանակ դեռ չէին պարզաբանված։ Փոխանակ այն բանի, որպէսզի որոշում կայացվի, հարկաւոր էր, պաշտպանների միջնորդութեան համաձայն, գործը նոր քննութեան ենթարկել։ Եւ այդ ես կընդունեի միակ ուղիղ ճանապարհը։ Ցանձին Դաշնակցութեան հալածվում էր հայ հասարակութեան այն մասը, որը իրանից կախված բոլոր միջոցներով ձգտում էր օգնել սահմանից այն կողմ գտնված իր եղբայրակիցներին, բայց այն ժամանակ պետութեան ներքին քաղաքականութիւնն ու նրա վրա ազդող արտաքին քաղաքականութիւնը, որը ներկայացնում էր Լօրանօվ-Ռոստովսկին, հայերին անպէտք տարը հռչակեց Ռուսաստանի համար։ Այն ժամանակ բերված առարկութիւններին պատասխանում էին, թէ մեզ համար բաւական է միակ Բոլգարիան։ Այժմ հանգամանքները փոխվեցին, և, ինչպէս կը բարեհաճէք տեսնել, Բոլգարիայից ոչ միայն չեն խուսափում, այլ ընականաբար համարում են Բոլգարիային ամենամօտ դաշնակիցը։ Այդպիսի հանգամանքներում Կ. Պոլսում անկարգութիւններ ծագեցին, որոնցից յետոյ պետութիւնները յիշեցին իրանց պարտաւորութիւնները և 1895 թ. դիմեցին թիւրքական կառավարութեանը յատուկ մեմօրանդումով, որի մէջ առաջարկվում էր շուտափոյթ ըէֆորմներ մտցնել։ Որպէս պատասխան այդ առաջարկութեան՝ սուլթանը իրաւէ հրատարակեց ըէֆորմների մասին, որոնք պէտք է մտցվէին այնտեղ։ (Ձայներ՝ «բաւական է»)։ Ես գտնում եմ, որ այժմ շոշափած իմ հարցերը այնքան նոր ու այնքան անհրաժեշտ են որոշելու հետեւեալ հարցերը, որ թւում է, թէ ես չը պէտք է ձանձրացնէի Պետական Դումայի յետագայ քննութեամբ (Ձայներ ձախից՝ «ճշմարիտ է, խնդրենք»)։ Ըէֆորմների մասին եղած իրաւէին որպէս պատասխան, որը հրատարակել էր ինքը սուլթան Աբդիւլ-Համիդի թիւրքաց կառավարութիւնը, ամենուրեք բռնկվեցին անլուր կոտորածներ, որի մասին այստեղ ձեզ արդէն խօսվեց. ես չեմ նկարագրի այն, չը խլելով ձեր ժամանակը, և կը բերեմ միայն մի քանի թւանշաններ, որոնք բոլոր խօսքերից աւելի գեղեցիկ ճարտասանութեամբ կը նկարագրեն ձեզ, թէ ինչ էր կատարվում այնտեղ։

(Վերջը միւս անգամ)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Դրոշ.)

3 և 4 յուլիսի

Լօնդօն. — Ցերեկը տեղի ունեցաւ դեսպանների խորհրդաժողով, որտեղ քննութեան առնվեց իրերի վիճակը Բալկաններում։

—

Լօնդօն.—Դեսպանախորհրդի յուլիսի 2-ի նիստը նուիրված էր ալբանական հարցի քննութեանը։ Բալկանեան կրիզիսը քննութեան չէ առնվել, սակայն ենթադրում են, որ դեսպանները միաձայն ընդունել են միջամտութիւն չը գործելու սկզբունքը։ Էպիրօսի սահմանի հարցի վերաբերմամբ խորհուրդը վերջնական վճռի չը յանգաւ. այնու ամենայնիւ յոյս կայ, որ այնպիսի համաձայնութիւն կը կայանայ, որը կը համապատասխանէ թէ պետութիւնների մեծամասնութեանը և թէ ընդունելի կը լինի Յունաստանի կողմից։

—

Պարիզ.—Արժանահաւատ աղբիւրներից հաստատվում է այն լուրը, որ Ֆրանսիան քայլեր է արել Կ. Պոլսում Լօնդոնեան դաշնագիրը և նրանց ընդունած սահմանները անխախտ պահպանելու համար. նոյնը արել է նա նաև Սօֆիայում բոլգարական լիազօրի առաջումը Նիշ կամ Ուսկիւբ շտապեցնելու նպատակով։ Պիշօնը առաջարկել է նոյնպիսի քայլեր անել նաև Բուխարէստում, ռումինական զօրքերի մուտքը Սօֆիա խափանելու համար։

—

Պետերբուրգ. — Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը յայտարարում է, որ հեռագրական հաղորդակցութիւնը Բոլգարիայի հետ խզված է, Բոլգարիա հացէագրված մանաւոր հեռագիրների ընդունելութիւնը դադարեցված է. կարգադրված է նոյնպէս, որ այլևս չընդունեն այնտեղ ուղարկվող արժէքաւոր նամակները։ Պօստային հասարակ թղթակցութիւնները առայժմ կայացվի, հարկաւոր էր, պաշտպանների միջնորդութեան համաձայն, գործը նոր քննութեան ենթարկել։ Եւ այդ ես կընդունէի միակ ուղիղ ճանապարհը։ Ցանձին Դաշնակցութեան հալածվում էր հայ հասարակութեան այն մասը, որը իրանից կախված բոլոր միջոցներով ձգտում էր օգնել սահմանից այն կողմ գտնված իր եղբայրակիցներին, բայց այն ժամանակ պետութեան ներքին քաղաքականութիւնն ու նրա վրա ազդող արտաքին քաղաքականութիւնը, որը ներկայացնում էր Լօրանօվ-Ռոստովսկին, հայերին անպէտք տարը հռչակեց Ռուսաստանի համար։ Այն ժամանակ բերված առարկութիւններին պատասխանում էին, թէ մեզ համար բաւական է միակ Բոլգարիան։ Այժմ հանգամանքները փոխվեցին, և, ինչպէս կը բարեհաճէք տեսնել, Բոլգարիայից ոչ միայն չեն խուսափում, այլ ընականաբար համարում են Բոլգարիային ամենամօտ դաշնակիցը։ Այդպիսի հանգամանքներում Կ. Պոլսում անկարգութիւններ ծագեցին, որոնցից յետոյ պետութիւնները յիշեցին իրանց պարտաւորութիւնները և 1895 թ. դիմեցին թիւրքական կառավարութեանը յատուկ մեմօրանդումով, որի մէջ առաջարկվում էր շուտափոյթ ըէֆորմներ մտցնել։ Որպէս պատասխան այդ առաջարկութեան՝ սուլթանը իրաւէ հրատարակեց ըէֆորմների մասին, որոնք պէտք է մտցվէին այնտեղ։ (Ձայներ՝ «բաւական է»)։ Ես գտնում եմ, որ այժմ շոշափած իմ հարցերը այնքան նոր ու այնքան անհրաժեշտ են որոշելու հետեւեալ հարցերը, որ թւում է, թէ ես չը պէտք է ձանձրացնէի Պետական Դուման յետագայ քննութեամբ (Ձայներ ձախից՝ «ճշմարիտ է, խնդրենք»)։ Ըէֆորմների մասին եղած իրաւէին որպէս պատասխան, որը հրատարակել էր ինքը սուլթան Աբդիւլ-Համիդի թիւրքաց կառավարութիւնը, ամենուրեք բռնկվեցին անլուր կոտորածներ, որի մասին այստեղ ձեզ արդէն խօսվեց. ես չեմ նկարագրի այն, չը խլելով ձեր ժամանակը, և կը բերեմ միայն մի քանի թւանշաններ, որոնք բոլոր խօսքերից աւելի գեղեցիկ ճարտասանութեամբ կը նկարագրեն ձեզ, թէ ինչ էր կատարվում այնտեղ։

(Վերջը միւս անգամ)

—

Հռոմ.—Սօֆիայից հաղորդում են, որ Դանէվը մեծ պետութիւնների ներկայացուցիչներին յանձնեց Կըրք-Քիլիսէի նահանգապետի հեռագիրը, որ թիւրքերը տիրեցին Լիւլէ-Բուրգաս կայարանը և գնում են դէպի Ուզուն-Քէօփրու։ Դանէվը խնդրեց պետութիւններին արտակարգ առաջադրութիւն անել Պոլսում, որպէսզի կանգնեցնեն թիւրքական զօրքերի առաջխաղացութիւնը, հիմնվելով այն բանի վրա, որ Լօնդոնում կայացրած խաղաղութեան դաշինքը թիւրքիայի ու Բոլգարիայի միջև վերջնական բնոյթ ունի։

—

Բէլգրադ.—Պաշիչը Սօֆիայի նախկին դեսպան Սպալայկովիչի ուղեկցութեամբ ուղևորվեց Նիշ՝ Վենիզելոսի հետ տեսակցելու համար։

—

Սալոնիկ.—Կէս գիշերին Վենիզելոսը գնաց Նիշ՝ Պաշիչի հետ հանդիպելու համար։

—

Բէլգրադ.—Պաշիչի տեսակցութիւնը Վենիզելոսի հետ տեղի ունեցաւ ոչ թէ Նիշում, այլ Ուսկիւբում։ Երկարատեւ խօսակցութեան միջոցին մինիստրներ-նախագահները մտքերի փոխանակութիւն ունեցան համարեա ընթացիկ բոլոր հարցերի վերաբերմամբ և կարծիքների համերաշխութիւն կազմեցին։ Ապա Վենիզելոսը վերադարձաւ յետ։

—

Աթէնք.—«Էստիան» հաղորդում է, որ բոլգարները թողնելով Կրեմնի լեռնալանջը՝ նահանջում են դէպի Դուբնից, հալածվելով յոյն-սերբական զօրքերից։

—

Աթէնք.—Աթէնական գործակալութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Վենիզելոսը գնացել էր գլխաւոր բանակը՝ խորհրդակցելու թագաւորի հետ թշնամական գործողութիւնները դադարեցնելու համար, Ռուսաստանի սկսած քայլերի առիթով։ Երկարատեւ կարծիքների փոխանակումից յետոյ, թագաւորը և Վենիզելոսը մշակեցին Ռուսաստանի առաջարկին պատասխանելու հիմունքները։ Աթէնական գործակալութիւնը կարող է յայտնել, որ չը նայելով համաձայնութեան գալու բոլոր պատրաստակամութեանը, որպիսին անդադար երևան է հանել յունական կառավարութիւնը, նա, ի նկատի առնելով որ Բոլգարիան շարունակ նենգութիւնների է դիմում, վերջինիս հետ յարաբերութիւնների աւելի հաստատուն հող որոնելով, կը համաձայնվի պատերազմական գործողութիւնները դադարեցնելու լոկ այն ժամանակ, երբ ռազմի դաշտում գտնացում տրված լինեն իր հետեւեալ պահանջներին. հրաժարվէ Բոլգարիան այն բոլոր երկիրներից, որը գրաւել են դաշնակիցները, ծածկէ պատերազմի պատճառած ծախքերը, վարձատրէ բոլգարներից հրդեհված գիւղերի բնակիչներին, կեանքի ու ստացուածքի ապահովութեան երաշխաւորութիւններ և դաւանանքի ու դասաւանդութեան ազատութիւն վերապահէ յոյներին Թրակիայում, մասամբ էլ Գարանում, արձակէ ռազմի կանչված բոլգարական զօրքանակը որոշ ժամանակամիջոցում։

—

Աթէնք.—Ֆրանսիական կառավարութիւնը յանձնարարել է Աթէնքի ֆրանսիական դեսպանութեան առաջին քարտուղարին և զինուորական կցորդին անմիջապէս ուղևորվել Մակեդոնիա՝ քննելու բոլգարների կողմից ազգաբնակութեան վրա գործադրված բռնութիւնները։

—

Բուխարէստ.—Ռուշչուկ-Վառնա գծը վրա ընդհարում տեղի ունեցաւ ռումինական զօրամասի և բոլգարական զօրքերի միջև։

—

Աթէնք.—Յուլիսի 3-ի ճակատամարտ

տը Վրոնտիի շրջակայքում վերջացաւ բոլգարների նահանջով։ Յուլիսի 4-ին յոյները գրաւեցին Վրոնտիի բարձունքները։ Բոլգարները յետ նահանջեցին մեծ կորուստներով։ Հաղորդում են, որ նահանջում են յունական զօրաբանակի դէմ գործող բոլգարական զօրքերը նոյնպէս։

—

Աթէնք.—Աթենական գործակալութիւնը հաղորդում է, որ յունական դիվիզիան առանց դիմադրութեան հանձնեցաւ գրաւեց Մէնիլիկօզը։

—

Աթէնք.—Զինուորական մինիստրութեան մէջ ստացված տեղեկութեան համաձայն, յուլիսի 2-ին ճակատամարտ է տեղի ունեցել յունական աջ թեւի վրա Սերես-Նեվրոկօպի ճանապարհին, որ տևել է մի ամբողջ օր. վերջացել է բոլգարների պարտութեամբ։ Վերջիններս խոշոր կորուստներով նահանջել են դէպի բոլգարական սահմանը, ճանապարհին ձգելով զէնքերն ու ռազմամթերքները։

—

Պարիզ.—Դրամական պահանջները քննող կաբինէտը քննութեան առաւ Յունաստանի լայացուցիչ պահանջները։ Թիւրքիան համաձայնվեց սկզբունքով հատուցանել վնասները միայն զերի վերցված նաւերի համար, այլ ոչ ժամանակաւորապէս բռնված ծերի։ Յունական պատուիրակութիւնը առաջարկեց յանձնել հարցը յատուկ միջնորդ դատարանի, սակայն Թիւրքիան արբիտրաժի համաձայն է լոկ նաւերը զերի վերցնելուց առաջացած վնասների չափը որոշելու նպատակով։ Թիւրքիայի պատուիրակները վճռականապէս հրաժարվում են նոյնպէս Եփեսոսի յոյն ազգաբնակութեան կրած վնասները վճարելու։ Պետերբուրգի Հեռ. Գործակալութեան թղթակիցը պատուիրակների հետ ունեցած խօսակցութիւնից այն տպաւորութիւնը ստացաւ, որ Բալկաններում տեղի ունեցած վերջին անցքերը բաւականաչափ սասակցրին թիւրքական պատուիրակութեան անզիջելիութիւնը։

—

Սոֆիա.—Հետախուզութեան համար դէպի Սէրէս ուղարկված բոլգարական զօրամասը պատահեց յունական 1000 հոգուց բաղկացած մի զօրամասի, որը առանց բաղի նահանջեց։ Երբ բոլգարները ներս մտան Սէրէսի արուարձանը, աներում պահ մնած յոյները սկսեցին հրացանաձգել անել։ Սկսվեց յամառ գնդակաձգութիւն։ Բոլգարները հակառակ շարժում սկսեցին քաղաքի շուրջը։ Յոյները, հնարաւորութիւն չունենալով շարունակել կռիւը, վճռեցին նահանջել, բայց նախապէս հրդեհեցին մթերապահեստները։ Հրդեհը հանգցնելու համար բոլգարների գործադրած բոլոր ջանքերը անհետևանք անցան։ Շատ շուտով հրդեհը բռնեց ամբողջ քաղաքը։ Այրվեց բոլգարական թաղը, ապա յունականը և թիւրքականը։

—

Սոֆիա.—Թիւրքական զօրքերը Էնեսս-Միդիա գծից 30 կիլոմէտր առաջ անցան դէպի Բունար-Հիսարի կողմը, առանց որևէ դիմադրութեան հանդիպելու, որովհետև այդ շրջանից հեռացել են բոլգարական զօրքերը։ Ազգաբնակութիւնը փախչում է թիւրք զօրքերի գործած թալանների ու բռնութիւնների պատճառով։

Մինիստրների կաբինէտը յուլիսի 2-ին հրաժարական տուեց։

—

Սոֆիա.—Բոլգարական գործակալութիւնը հաղորդում է. «Ցունական հեծելազօրքը, առաջ գնալով Սարուսիցայի հովիտով դէպի Սարոմա, ճանապարհին հրդեհում է բոլոր գիւղերը։ Յոյների դէմ գործող բոլգարական զօրամասի հրամանատարը տեղեկացնում է, որ նրա զօրքերը առանց դիմադրութեան հեռացել են Կաւալայից և Դրամայից։ Այդ շրջանում յոյները հրդեհեցին բոլգարական գիւղերը։ Բուսմինական հեծելազօրքի մի զօրամաս յայտնվել է Զերվենբրէգ կայարանի մօտ և խզել երկաթուղային հաղորդակցութիւնը Սոֆիայի ու Վառնայի միջև – միակ ազատ գիծը, որտեղով մատակարարվում էր արտասահմանից զօրքերի համար բերվող ռազմամթերքները։ Միւս կողմից, ի նկատի ունենալով երեք օր առաջ Վառնայի երկաթուղային կայարանի և հեռագրատան գրաւումը, ուր ուարտվում է Սեվաստոպոլի հեռագրագիծը, Բոլգարիան, բացի Բուսմինիայի և Սերբիայի գծից, այլ ևս ոչ մի հնարաւորութիւն չունի ուղղակի յարաբերութիւն ունենալու արտասահմանի հետ։ Վառնայում վեր բերված ապրանքները անկարելի է ուղարկել երկրի ներսերը։ Իրերի այդ վիճակը չափազանց ճնշող ազդեցութիւն է թողնում այստեղ»։

—

Սոֆիա.—Բոլգարական գործակալութիւնը հաղորդում է. «Մանաւոր տեղեկութիւնների համաձայն, բուսմինական զօրքերը, գրաւելով Սիլիսարիան, գնում են Դուզրուկանի վրա։ Յուլիսի 3-ին բուսմինական երեք ռազմանաւեր զօրք իջեցրին Օրէխովի և Նիկօպոլի միջև գտնվող Գիգեն գիւղի մօտ, և մտադիր են շարժական կամուրջ ձգել Դունայի վրայից։ Ապա նրանք գրաւեցին Սօմօվիտայի մօտակայ Մաղուրա գիւղը, որ Դունայից դէպի Սոֆիա տանող երկաթուղային վերջին կէտն է հանդիսանում։ Օրէխովից դուրս գալով զօրքերը գնացին Վրատցէի ուղղութեամբ»։

—

Սոֆիա.— Դանէվի հրաժարականի պատճառով ժողովի նիստը փակվեց։ Մալինովը աշխատում է կօալիցիոն կաբինէտ կազմել։

Թիւրքական զօրքերը դէպի Կըրք-Քիլիսէ առաջխաղալու պատճառով Թրակիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը սարսափահար փախչում է իր բնակավայրերից դէպի Բոլգարիա։

—

Սոֆիա. – Բոլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ յուլիսի 3-ին բոլգարները յարձակվեցին Բոլգարիայի սահմանները մտած սերբական զօրքերի վրա, յետ մղեցին նրանց դէպի Վլասին։ Յոյների ջնջերը՝ բոլգարական ձախ թեւը յետ մղելու նպատակով՝ անաջող անցաւ։ Յարձակումը յետ է մղված։ Յոյները մեծ կորուստներ ունեցան։

—

Սոֆիա.—Բուսմինական հետևակ զօրքը գրաւեց Բալչիկը, Դօբրիչը և Տուարականը։ Բուսմինական հեծելազօրքը յուլիսի 3-ին անցաւ Բալսօվօ գիւղը։ Բուսմիններին ոչ միայն դիմադրութիւն ցոյց չը տրվեց, այլ և, ընդհակառակը, նրանց դիմաւորեցին բոլգարական ազգաբնակչութեան պաշտօնեաները։ Շատ բոլգարներ բուսմինական զօրքերի գրաւած տեղերից փախան դէպի երկրի ներսերը։

—

Կ. Պոլիս.— Պաշտօնապէս հաղորդվում է, որ թիւրքական զօրքերը հասան Էնեսս-Միդիա գծին ու կանգ առան, գրաւելով Միդիան, Սարայը, Կարաշը, Տիրան, Սէլիվրէրը, Մուրադլէն, Մալգարան և Բէշա Նենեսը։

—

Բէլգրադ.—Յուլիսի 2-ին սերբական մի զօրամաս գրաւեց Թուռիկամիկը, որ բոլգարական առաջաւոր գիրքն է Կիւստէնդիլի մօտ։ Բոլգարները խոշոր կորուստ են ունեցել։

Լոնդոն.—Կ. Պոլսից հաղորդում են Բէյտերի գործակալութեանը, որ թիւրք կառավարութիւնը վճռել է գնալ դէպի առաջ մինչև Ադրիանուպոլիս։

—

Պարիզ.—«Թանը» հաղորդում է. «Նկատի առնելով այն, որ թիւրքական պատգամաւորութիւնը սիստեմատիկաբար հրաժարվում է ճանաչել բալկանեան պետութիւնների իրաւունքը դրամական վարձատրութիւն ստանալու, սերբական պատգամաւորութիւնը յայտնեց, որ դրամական վարձատրութեան հարցը սերա կերպով կապ ունի պարտքերը պետութիւնների վրա բաժանելու հարցի հետ, ուստի, եթէ չը լուծվի առաջինը, չի լուծվի նաև երկրորդը։ Գերմանական պատգամաւորը բողոքեց և պահանջեց, որպէսզի հարցը թողնվի մանաժողովի ընդհանուր նիստի քննութեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 և 4 յուլիսի

Կ. Պոլիս.—Կառավարութիւնը հրամայել է խիստ միջոցներ ձեռք առնել Բոգոսոյում բոլգարական զօրքերը գնալուց յետոյ տեղի ունեցած անկարգութիւնների մէջ յանցաւորների դէմ։ Հայոց եպիսկոպոսը հայոց պատրիարքի յանձնարարութեամբ մեկնեց այն տեղ քննութիւն կատարելու համար։

—

Վիէննա.—Լրագիրները քննում են Գրէյի ճառը։ Գրէյը անկեղծօրէն պատկերացնում է իրերի դրութիւնը մասյ գոյներով։ «Մենք զգում ենք,—ասում է լրագիրը (?),—որ գտնվում ենք անդունդի ծայրին»։

Հէյնոս, Վեզէր և Էլբա գետերը իրար հետ ջրանցքով միացնող կօմիտէտը տեղեկութիւն է ուղարկում, մատնանշելով գերմանական գիւղատնտեսութիւնը սպառնացող վտանգը, Ռուսաստանում ալիւրի և հացահատիկների վրա տուրք նշանակելու հաստատականութիւնը աչքի առաջ ունենալով։

—

Լոնդոն.—Լորդերի պալատը 302 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 164-ի երկրորդ ընթերցումից յետոյ մերժեց հօմրուլի օրինագիծը։ Ընդունվել է Լէնսդաունի բանաձևը, որը յայտնում է, թէ պալատը չի ընդունի օրինագիծը, մինչև որ չը ստանայ ժողովրդի հաւանութիւնը։

—

Լոնդոն.—Դուբլինի գլխաւոր պօստատանը նամակները կարգի բերելիս պայթեց մի նամակ, որը ուղղված էր պարլամենտի անդամ Դիլլօնին։ Կարգի բերողը վիրաւորված է ծանր կերպով։ Պայթիւնը վերագրում են սուֆրաժիստուհիներին։

—

Պետերբուրգ.—Պետական Խորհուրդը առանց վիճաբանութիւնների ընդունեց Դումայի խմբագրութեամբ 38 օրինագիծ։

Պետական քարտուղարը զեկուցեց, որ յունիսի 30-ին Բարձրագոյնս վաւերացված է Պետական Խորհրդի և Դումայի հաւանութիւնը ստացած 1913 թւի պետական եկամուտի և ծախքերի նախահաշիվի օրինագիծը։

Լոնդոն.—Կ. Պոլսից հաղորդում են Բէյտերի գործակալութեանը, որ թիւրք կառավարութիւնը վճռել է գնալ դէպի առաջ մինչև Ադրիանուպոլիս։

—

Պարիզ.—«Թանը» հաղորդում է. «Նկատի առնելով այն, որ թիւրքական պատգամաւորութիւնը սիստեմատիկաբար հրաժարվում է ճանաչել բալկանեան պետութիւնների իրաւունքը դրամական վարձատրութիւն ստանալու, սերբական պատգամաւորութիւնը յայտնեց, որ դրամական վարձատրութեան հարցը սերա կերպով կապ ունի պարտքերը պետութիւնների վրա բաժանելու հարցի հետ, ուստի, եթէ չը լուծվի առաջինը, չի լուծվի նաև երկրորդը։ Գերմանական պատգամաւորը բողոքեց և պահանջեց, որպէսզի հարցը թողնվի մանաժողովի ընդհանուր նիստի քննութեան։

Հոսմ.—Սօցիալիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէտը, ի նկատի ունենալով ընտրութիւնների մօտիկ լինելը, որոշեց, ընդհանուր ընտրողական իրաւունքի մասին հրատարակված նոր օրէնքի հիման վրա, ընտրութիւնների միջոցին լիակատար չափով պարզել սօցիալիստների մաքրիմաղ պահանջների ծրագիրը, ջանք թափել առաջիկայ նստաշրջանում անցկացնել տալ սօցիալական անհրաժեշտ բարենորոգումների համար ունևոր դասակարգի վրա մի միլիարդ լիր տուրք սահմանելու օրէնքը։

—

Թէհրան.—Մինիստրների կաբինետը մշակել է մէջլիսի ընտրութիւնների վերաբերեալ յայտարարութեան ընագիրը։ Ընագիրը հեռագրով հաղորդված է Պարիզ և հատատութիւն խնամակալի։ Պահպանողական տարրերը մտադիր են դիմադրել մէջլիսը հրաւիրելուն, իսկ այն դէպքում, եթէ դիմելու լինեն ընտրութիւններին, բաստ նստել։

—

Խանկոյ.—Ցիւձեանի մօտ շարունակվում է կռիւը։ Քաղաքի գլխաւոր կէտերը գրաւել են հիւսիսային զօրքերը։

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Բալկանեան ճգնաժամը չէ լուծված, եթէ նոյն իսկ նպէնք նրա վրա սլաւոնների թիւրքական լուծի դէմ մղած ազատարար պատերազմի տեսակէտով։ Յատկապէս «Բալկանները բալկանեան ժողովուրդների համար» սկզբունքի որ իրականացման մասին այժմ կարող է խօսք լինել, երբ բալկանեան կօալիցիայի մասնակիցներից իւրաքանչիւրի համար նրա դաշնակից «եղբայրակիցներից» մնացած բոլորն այժմ հանդիսանում են ճիշդ այնպիսի վաղեմի թշնամիներ և «օտարերկրացիներ», որպիսին դեռ մօտ անցեալում թիւրքերն էին։ Բալկանեան ճգնաժամը չէ լուծված։ Բայց նրանով սկիզբ է դրված միջազգային քաղաքականութեան նոր խելամտութեանը, որի համար արդէն ակնարկներ են եղել թէ Լոնդոնի կոնֆերէնցիայում, թէ նույն իսկ դեռ նոր իր աշխատանքներին ձեռնարկած Պարիզի ֆինանսական կոմիսիայում։

Լոնդոնի կոնֆերէնցիան, ինչպէս որ այդ արդէն բաւականաչափ պարզվեց, չանցաւ բոլորովին այն ֆարվատէրով, որը ցանկալի էր Պարիզի և Պետերբուրգի դիպլոմատիայի համար։ Ալբանիայի համար և թիւրքական հողերին միացող արևելեան սահմանի համար նրա որոշումների մէջ կարելի է լիակատար հիմունքներով տեսնել թէ զիջում երբեակ դաշնակցութեանը, թէ նեղուցները բանալու ռուսական պահանջներին բաւարարելուց հրաժարվելը։ Բայց հէնց այդ որոշումների մէջ պարփակվում էին և անհրաժեշտ առաջադրութիւններ ինչպէս Կովէյտի և Պարսից ծոցի մասին անգլօ-թիւրքական հանձնաժողովների համար, այնպէս էլ հարբերատար վերաբերմունք Գերմանիայի կողմից դէպի այդ համաձայնութիւնը։ Անգլիայի համար Հնդկաստանին մերձենալը վերջնականապէս խափանելու նրա պլանը անմատչելի կը լինէր, եթէ որ նա դէթ մի բօպէ հրաժարվեր նեղուցները պահպանելու իր արտաքին գերից։ Բայց նեղուցների անձեռնմխելիութեան ապահովումը անմատչելի է առանց Թիւրքիայի միս մնացած կալուածների անձեռնմխելիութեան երաշխաւորութեան. և այդ կէտում Անգլիան անխուսափելիօրէն պէտք է մօտենար Գերմանիային, որը պաշտպանում էր արդէն օսմանեան կայսրութիւնը միայն նրա համար, որ զբանից էր կախված նրա մուտքը դէպի Արևելք և ամենից առաջ՝ Բաղդադի ճանապարհի կառուցումը։

Անգլիան ամբողջ տասը տարի կռւում էր գերմանական ազդեցութեան ուժեղանալու դէմ Բօսֆորում։ Տրիպոլիտանական պատերազմը և Լոնդոնի տուած հանձնարարութիւնը բալկանեան պատերազմին՝ կռի ուժեղ միջոցներ էին այդ ազդեցութեան դէմ, իր տեսակի «առարկայական դասեր», տրված Կ. Պոլսին նրա՝ անգլիական պէտքերը արհամարհելուն համար։ Թիւրքիայի կործանումն ու էդ. Գրէյի արուեստական խաղը բարձրացրին այդ պէտքերը և բարձրացրին այնչափ, որ այժմ արդէն Անգլիան մտել է Թիւրքիայի ճանաչված հովանաւորի դերում, ի հարկէ, բարեկիրթ վարձատրութեան և մինչ այդ թշնամի Գերմանիայի հետ գործակցութեան համար։

Այն մասին, թէ ինչպէս մեծ են Անգլիայի ձեռք բերած աջողութիւնները մերձարևելեան քաղաքականութեան մէջ, տեսնից լաւ խօսում է անգլօ-թիւրքական պայմանագրի տեկստը, որ հաղորդեց յայտնի գերմանացի քաղաքագէտ Պ. Բօրքաը «Deutsch-asiatischen Korrespond»-ի էջերում։ Ինչպէս որ կան հիմունքներ կարծելու, այդ ամենալիակատար և ամենահաւատի վարիան է պայմանագրի։

Մամուլի մէջ արդէն հրատարակված կէտերից զատ՝ Բաղդադի ճանապարհի, Կովէյտի և այլոց մասին, այդ պայմանագիրը պարունակում է իր մէջ նոյնպէս և հետևեալ պարտաւորութիւնները։

Անգլիայի կողմից.

1) Ներկայ թիւրքական կալուածների անձեռնմխելիութեան ապահովումը 40 տարով։

2) Դիպլոմատիական աջակցութիւն Թիւրքիային խաղաղ բանակցութիւնների ժամանակ և ճնշումն դաշնակիցների վրա շուտափոյթ հաշտութիւն կնքելու մասով։

3) Աջակցութիւն պատերազմի ֆինանսական լիկվիդացիայի խնդիրներում։

4) Աջակցութիւն կղզիների և փոքրասիական ափերի խնդիրը կարգաւորելիս։

5) Պատաւորութիւն պաշտպանելու, Ալբանիայի լիակատար աւտօնոմիայի դէպքում, մահմեդական թեկնածուի կանդիդատութեան, իսկ միւս դէպքում պաշտպանել թիւրքական զերիշխանութեան սկզբունքը։

Թիւրքիայի կողմից.

Ներկայ թիւրքական կալուածների անձեռնմխելիութեան ապահովումը 40 տարով։

Դիպլոմատիական աջակցութիւն Թիւրքիային խաղաղ բանակցութիւնների ժամանակ և ճնշումն դաշնակիցների վրա շուտափոյթ հաշտութիւն կնքելու մասով։

Աջակցութիւն պատերազմի ֆինանսական լիկվիդացիայի խնդիրներում։

Աջակցութիւն կղզիների և փոքրասիական ափերի խնդիրը կարգաւորելիս։

Պատաւորութիւն պաշտպանելու, Ալբանիայի լիակատար աւտօնոմիայի դէպքում, մահմեդական թեկնածուի կանդիդատութեան, իսկ միւս դէպքում պաշտպանել թիւրքական զերիշխանութեան սկզբունքը։

Թիւրքիայի կողմից.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱՋ

—

Իմ քունը այնքան է երկար, ասես թէ՝ զարթ՞ը եմ քնել, ասես թէ՝ չը պէտք է զարթնեմ. մարմինս այնքան է յոգնել։

Թռում է, որ իբր քնած եմ անհունի ծոցում, որ իբր արեւը, աստղ՞երը շատ ցածր են երկնքից, որ իբր՝ երկիրը այնքան է հեռու ինձանից, այնքան է պտիկ, աննշան, որ չէ երևում...

Հոգիս ու մարմինս վաղուց են պաղել ու սասել. զգում եմ թէ ի՞նչպէս հիւծվում ու մեռնում եմ կամաց։

Մինչդեռ տիեզերքն իր մեծ-զոյութիւնը հսկայ՝ պահում է ամուր, անսասան, ասես թէ սկի մահ չը կայ...

Եւ ե՞ս, որ երբեմն այնպէ՞ս կը ցանկայի մեռնել, հիմի մեռնող ջղաձգութիւնների մէջ, հոգեվարքիկոլոր ձայնով կանչում եմ ուժգնորէն.

«Երկնքի կայծակնե՞ր. ձեր հրազանգ հոգիների մէջ ամփոփված՝ շանթող ու ցնցող էլեքտրականութիւնը լուսավառ՝ տիեզերքի բոլոր կրակների հետ միասին նե՞ս հոսեցէ՞ք իմ սառած երակների մէջ, ցնցեցէ՞ք իմ մեռած զոյութիւնը և զարթեցրէ՞ք ինձ... Եւ վառեցէ՞ք հանդած ջահը կանքիս։ Ես չեմ ուզում մեռնել... Ես ապրել եմ ուզում...»։

Ս. Յովհաննիսեան

Պետերբուրգ

ԹԱԽԻԾ

(Հեհերլինից)

—

Չեմ կարող ճշդիւ ասել, թէ երբ և որ մարդին է նա զարիս։

Ո՛չ որոշել ժամանակ, և ո՛չ յատուկ օրեր ունի նա։

Գալիս է գարնանային զուարթ, աղմկալի առաւօտները, ամառվայ կապուտակ, անուշարոյր երեկոները, աշնանային ազատ վերջալոյսին, ձմեռվայ ցրտաշունչ, լռիկ գիշերները։

Կը փնտռէ ինձ ամբոխի մէջ, քովս կը նստէ թատրոնում, կը գանէ եկեղեցում, կը բռնէ զուռը բանալիս՝ երբ կուզեմ... փախչել ինքս ինձնից։ Ո՜հ, նա ամէն տեղ է, անկանչ, անփափաք։

Բռնազբօսիկ կեղծ ժպիտը դէմքին՝ նեղողութիւն է խնդրում։

— Այցելութիւններս շատ են յաճախ, հա՞։

Ինձ հեղգանդեցնում, հիպնօսում է։ Մխանգամայն ենթարկվում եմ այս դալկադէմ և տկար սեազեստ էակին։ Մի մանկիկ, մի իր եմ զգում ես ինձ։

Երբեմն ծոնկ եմ չոքում նրա առաջ և առնելով իր թոյլ, անզօր ձեռքերը՝ լալիս եմ։

— Թող ինձ... հեռացի՛ր գնա... մոռացի՛ր... զուրկ ես դեռ բաղդաւոր լինեմ...

Նա մեղմօրէն շոյում է մազերս, սիրով նայում է աչքերիս, վարանոտ հարցնում է.

— Բայց ուր գնամ, զաւակս։ Չէ՞ որ քո անունն եմ կրում։ Առանց ինձ դու ինչպէս կարող ես ապրել։ Առանց ինձ...։

Խօսում է ծաղրալի-արհամարհական եղանակով, անյոգդոզդ հանգարտութեամբ...։ Գիտեմ, որ չը պիտի հեռանայ։ Լռում եմ։

Ցաճախ գրկում է ինձ բուռն թափով... անյագաբար, մոլեգնօրէն...։ Այնպէ՞ս ուժգին, այնպէ՞ս ուժգին...։ Եւ վայրկեանները յաւիտեան են թռում ինձ։

Օր ըստ օրէ տկարանում եմ։ Իմ շըրթունքս և ձեռներս էլ նոյնպէս անդոյն են, ինչպէս նրանը։ Ես էլ չը գիտեմ պարզ ժպտալ։ Նա ծծում է արիւնս ուղղակի սըրտիս միջից։ Իմ խե՛ղճ, տանջված սիրտ։

Ո՛չ մի բանով չեմ կարող ամոքել սրտիս ցաւերը, ո՛չ մի բանով։

Եւ ես յուսահատված աղաչում եմ, բոլորովին թոյլ ձայնով։

— Թող ինձ, գնա...

Իսկ նա զարմանում է.

— Ո՞ւր գնամ։

Եւ մենք դարձեալ միասին ենք։

Ես և թախիծս։ Մ. Ե.

ԳԱՏԱՍՏԱՆԻ ՏԱՆԸ

(Օսկար Ուայլդից)

—

Լռութիւն էր տիրում դատաստանի տանը, ու մերկ մարդը կանգնած էր Աստուծոյ առաջ։

Եւ ասաց Աստուած մարդու կենդանութեան գիրքը։

Եւ ասաց Աստուած մարդուն.

— Դու կեանքումդ ամէնից չապրեցիր։ դու բարեացակամ չէիր նրանց հանդէպ, պէտք ունէին խրախուսանքի, և նրանց, որոնք օգնութիւն էին հայցում, դու անարդում էիր և քարսիրտ։ Խեղճերը գալիս էին դէպի քեզ, սակայն դու չէիր լսում նրանց և քո ականջը խուլ էր դէպի իմ ճնշվածների ու թշուառների լաց ու կոծը։ Դու սեփականացնում էիր օրերի ու այրերի ժառանգութիւնը և քո հարևանի ագին բաց էիր թողնում աղուէսներ։ Դու երեխաների հացն էիր խլում ու տալիս շներին. և իմ ճնշվածներին, որոնք հանգիստ ապրում էին ճահիճների մէջ և որոնք ինձ փառաբանում էին, դու վռնտում էիր դէպի մեծ ճանապարհները, և իմ հողի վրա, որից ես քեզ ստեղծեցի, դու թափեցիր անէծք արիւն։

Եւ պատասխանեց մարդը.

— Այդ բոլորը ես եմ կատարել։

Եւ նորից Աստուած բաց արեց մարդու կենդանութեան գիրքը։

— Դու ազնիւ կեանք չանցկացրիր. այն գեղեցկութիւնը, որ դու փնտռում էիր, ցոյց տուի քեզ, և այն բարութիւնը, որ ես ծածկում էի, դու չը նկատեցիր։ Քո սենեակի պատերը նկարներով են ծածկված, և քո նոզկալի ու զազրելի մահճից դու բարձրանում էիր ֆլէյտայի ձայնի միջոցով։ Դու հօթն յանցանքի զոհեր կանչեցիր, որի համար ես չարչարանքներ ընդունեցի, և դու կերար այն, ինչ արգելված էր, ու քո զգեստի ծիրանին հիւսված էր նոզկանքի ու զազրանքի երեք նշաններով։ Քո կուռքերը ոչ արծաթեայ և ոչ ոսկեայ էին, որը յաւիտենական է, այլ մարմնից, որ մեռնում է։ Դու նրանց վարտերը թրջում էիր անուշ բուրմունքներով և նրանց ձեռները տալիս էիր նոներ։ Դու նրանց ոտները ներկում էիր զաֆրանով և նրանց առաջ փռում գորգեր։ Նրանց արտանունքները ներկեցիր ծաղիրով ու նրանց մարմինը օծում էիր միւռոնով։ Նրանց առաջ երեսն ի վայր էիր ընկնում և քո կուռքերը տեղափոխում էիր պայծառ արեգակի վրա։ Արեգակին ցոյց էիր տալիս քո խայտառակութիւնը և լուսնին՝ քո անմատչութիւնը։

Եւ պատասխանեց մարդը ասելով.

— Այդ բոլորը ես եմ կատարել։

— Դու ազնիւ կեանք չանցկացրիր։ դու գեղեցկութիւնը, որ դու փնտռում էիր, ցոյց տուի քեզ, և այն բարութիւնը, որ ես ծածկում էի, դու չը նկատեցիր։ Քո սենեակի պատերը նկարներով են ծածկված, և քո նոզկալի ու զազրելի մահճից դու բարձրանում էիր ֆլէյտայի ձայնի միջոցով։ Դու հօթն յանցանքի զոհեր կանչեցիր, որի համար ես չարչարանքներ ընդունեցի, և դու կերար այն, ինչ արգելված էր, ու քո զգեստի ծիրանին հիւսված էր նոզկանքի ու զազրանքի երեք նշաններով։ Քո կուռքերը ոչ արծաթեայ և ոչ ոսկեայ էին, որը յաւիտենական է, այլ մարմնից, որ մեռնում է։ Դու նրանց վարտերը թրջում էիր անուշ բուրմունքներով և նրանց ձեռները տալիս էիր նոներ։ Դու նրանց ոտները ներկում էիր զաֆրանով և նրանց առաջ փռում գորգեր։ Նրանց արտանունքները ներկեցիր ծաղիրով ու նրանց մարմինը օծում էիր միւռոնով։ Նրանց առաջ երեսն ի վայր էիր ընկնում և քո կուռքերը տեղափոխում էիր պայծառ արեգակի վրա։ Արեգակին ցոյց էիր տալիս քո խայտառակութիւնը և լուսնին՝ քո անմատչութիւնը։

Եւ պատասխանեց մարդը ասելով.

— Այդ բոլորը ես եմ կատարել։

Երրորդ անգամ Աստուած բաց արեց մարդու կենդանութեան գիրքը։

Եւ ասաց Աստուած մարդուն.

— Քո կեանքը ազնիւ չանցկացրիր։ Քո արութիւնը վարձատրեցիր չարութեամբ և բարեսրտութիւնը՝ դաժանութեամբ ու խստութեամբ։ Քեզ կերակրող ձեռները դու վիրաւորեցիր և մնուցանող կուրծքը դու ապտակեցիր։ Քեզ մօտ ջրի եկողին ծարաւի յետ դարձրիր։ Քեզ սպանող թշնամուն դու որսում էիր դաւերով, քեզ հետ միասին կռուող ընկերոջդ դու փղոյով էիր ծախում. և նրանց, որոնք քեզ սէր էին բերում, դու վարձատրում էիր շուայտութեամբ, ցոփութեամբ ու խայտառակութեամբ։

Եւ պատասխանեց մարդը ասելով.

— Այդ բոլորը ես եմ կատարել։

Եւ Աստուած փակեց մարդու կենդանութեան գիրքը և ասաց.

— Ես կուղարկեմ քեզ դժոխք. այո, ես կուղարկեմ քեզ դժոխք։

Եւ մարդը զոռաց.

— Դու այդ չես կարող։

Եւ Աստուած ասաց մարդուն.

— Ինչու՞ չեմ կարող քեզ դժոխք ուղարկել, ինչ պատճառով։

— Որովհետև դժոխքում անց կացրի ամբողջ կեանքս,—պատասխանեց մարդը։

Դատաստանի տանը տիրեց լռութիւն։

Մի քանի րոպէ անց՝ ասաց Աստուած.

— Եւ որովհետև քեզ չեմ կարող դժոխք ուղարկել, այն ժամանակ կուղարկեմ դրախտ, այո, դրախտ։

Եւ զոռաց մարդը.

— Չես կարող այդ անել։

Եւ ասաց Աստուած մարդուն.

— Ինչու՞ չեմ կարող քեզ դրախտ ուղարկել, ինչ պատճառով։

— Որովհետև երբէք և ոչ մի տեղ ես չեմ կարողացել երկակայել դրախտը,—պատասխանեց մարդը։

Դատաստանի տանը տիրեց խորին լռութիւն։ Յար. Յարութիւնեան

Էջմիածին

1) Պարտաւորութիւն երաշխաւորելու Անգլիայի առանձին շահերը Բաղդադի ճանապարհի խնդրում, մանաւորապէս Բաղդադ-Բասրայի շրջանում։

2) Թողնել Անգլիային առանձին առաւելութիւններ Հարաւային Արաբիայում, Անգլիայի այդ շրջանում ունեցած էական տնտեսական շահերի նկատումով։

3) Մացնել անհրաժեշտ բարենորոգումներ Փոքր-Ասիայում, յատկապէս Հայաստանում, Քիւրդիստանում, Սիրիայում և Միջագետքում։

4) Թողնել Անգլիային գործողութիւնների լիակատար ազատութիւն Կովէյտի սուլթանատում։

5) Ընդհանուր գնալ արաբ ցեղերին նրանց դէպի ինքնավարութիւն ունեցած ձգտումների մէջ։

6) Կարգադրել յօգուտ Պարսկաստանի՝ ծագած սահմանային վէճերը։

Այդ փոխադարձ պարտաւորութիւնների ընդհանուր գումարի մէջ իրանց վրա առանձին ուշադրութիւն են դրաւում երկու հանգամանք։ Այդ, առաջին, Անգլիայի համաձայնութիւնն է դուրս գալ Թիւրքիայի դիպլոմատիական փաստաբանի դերում բոլոր միջազգային խորհրդակցութիւնների ժամանակ և Թիւրքիայի պաշտպանի դերում նրա մնացած կալուածների ամբողջութեան վրա յարձակվողների վերաբերմամբ։ Երկրորդ՝ Թիւրքիայի համաձայնութիւնը Անգլիայի գաղտնի հովանաւորութիւնը հաստատելու ոչ միայն Կովէյտում, Շատ-իլ-Արաբում, այլև արաբական թերակղզու հարաւային մասում։ Զը նայած որ «պրոտէկտորատ» խօսքը չը կայ էլ պայմանագրի ընդարում, բայց Անգլիայի «առանձին շահերի» ճանաչումը Արաբիայում, նոյնպէս և ինքնավարութիւն հաստատելու անհրաժեշտութիւնները — այդ վճռական քայլն է հաստատելու փաստացի պրոտէկտորատը։ Հարաւային Արաբիային սպառում է այժմ Եգիպտոսի վիճակը, և Անգլիայի կողմից, ի հարկէ, չի պահանջվի առանձին ջանք, որպէսզի հանի իր մերձ-արաբական քաղաքականութեան վախճանական նպատակին — ոչ միայն փակելու ընդմիշտ ծովային ճանապարհին դէպի Հնդկաստան, այլև օգտակին անց-կացնելու եռակի կղզէք։ («R.M.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԸ

Ներկայ 1913 թ. մայիսի 11-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը № 761 կոնդակով հաստատել է Երևանում ընտրված թեմական յօբելեանական յանձնաժողովը՝ հանգանակելու համար նուիրատուութիւններ յօգուտ դպրոցական ֆոնդի։ Այդ յանձնաժողովը, որ գործում է Երևանի փոխ-թեմական Խորհրդի և Եպիսկոպոսի նախագահութեամբ, տպագրել է կաթողիկոսական կոնդակը և իր կողմից ևս կցել նրան մի կոչ, ուղղված թեմի հայ ժողովրդին, հետևեալ բովանդակութեամբ.

«Ազգիս Վեհափառ Կաթողիկոսի սոյն սրբատառ կոնդակի հիման վրա կոչ ենք անում ձեզ, Երևանի թեմի հայ ժողովուրդ. կոչ ենք անում յաւերժացնելու հայ տարերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանը։ Ազգային այդ պանծալի և մեծ յօբելեանը կատարելով, պէտք է հայ ժողովուրդը սրտի առանձին գոհունակութեամբ, միահամուռ կերպով անմահացնէ այդ ծանր նշանակութիւնը մի վեհ գործով՝ ընդհանուր դպրոցական ֆոնդի հաստատումով։

«Ցաւանի է, որ ազգերի կեանքի մէջ առաջխաղացութեան, ժողովուրդների բարօրութեան և կուլտուրական շարժման գլխաւոր առանցքը՝ դպրոցն է համարվում. մի հիմնարկութիւն, որտեղ մատաղերամ սերունդը զովում, մաքրվում է բազմատեսակ պակասութիւններից, զինվում է գիտութեան տուած պաշարով և դաստիարակվելով ընդհանուր գործունէութեան համար՝ ամեն տեղ, ամեն ժամանակ հասարակական կեանքի օգտակար յեղաշրջմանը խթան է հանդիսացել։

«Հայ ժողովուրդ, այսօր ահա այդ մեծ հիմնարկութեան, դպրոցի տարածութեան խնդրին է դրված քո առաջ քո սիրելեալ Հայրապետի կողմից. մի խնդիր, որ սուրբ է բոլորիս համար անխտիր, թէ մեծի ու փոքրի, թէ հարուստի ու աղքատի համար։

«Ձեզ, հայ ժողովրդի գիտակից ներկայացուցիչներ, յանուն հայ ժողովրդի ընդհանուր առաջադիմութեան, առաջարկում ենք սրտանց մօտենալ այդ խնդրին, օգնութեան ձեռք կարկառել մեզ՝ հասկացնելով, բացատրելով վերոյիշեալ խնդրի մեծ նշանակութիւնը ժողովրդի այն բոլոր խաւերին, որոնց համար դպրոցի նշանակութիւնը դեռ այնքան պարզ չէ, մութ ու խաւար է։ Օգնեցէք մեզ ձեր եռանդուն գործունէութեամբ, որպէսզի ժողովրդի տուած նուէրներով հնարաւոր լինի ընդհանուր դպրոցական ֆոնդ կազմել, որով միայն հնարաւոր կը լինի ապահովել մեր դպրոցների գոյութիւնը և ապա նրանք կանգնելով իրանց բարձրութեան վրա հասարակական կեանքի լուսաւորութեան կենտրոններ կը դառնան։

«Դպրոցական ֆոնդի կազմակերպութեան համար, հաճայն Վեհափառ Հայրապետի նախորդ հրամանների, շրջաբերականներով մատեաններ և տոմարագրութեան թերթեր են ուղարկված Երևանի թեմի բարձրապատիւ փոխանորդներին և արժանապատիւ գործակալներին, որոնց և յանձնաժողովիս նախագահի՝ Երևանի փոխ-թեմական կողմից առաջադրված է տեղական մասնաժողովներ կազմակերպել և սկսել ժողովարարութեան գործը, որ, հաճայն Կովկասի տէր փոխարքայի թոյլտուութեան, վերջանալու է սոյն տարվայ հոկտեմբերին։ Աջակցեցէք նրանց բոլորին, օգնեցէք ինչով հնարաւոր է։

«Թեմական յօբելեանական յանձնաժողովս միանգամայն վստահ է հայ ժողովրդի բոլոր խաւերի աջակցութեան և բանիմաց տարրի գիտակից վերաբերմունքի վրա և յոյս ունի, որ Երևանի թեմի հայ ժողովուրդը իր սրտաբուղխ և եռանդուն աջակցութիւնը ցոյց կը տայ այս գործում»։

Այս գոհունակներից պարզ է, որ ինչպէս Շարախում, նոյնպէս և Երևանում (և այլ թեմերում, ինչպէս գիտենք) կաթողիկոսական կոնդակով կայ հաստատված թեմական յօբելեանական յանձնաժողով, որ, ինչպէս վայել է ամեն մի օրինաւոր հաստատութեան, գործում է ուղղակի, առանց յետին մտքերի և գործում է յօգուտ այն նպատակի իրագործման, որի համար հաստատված է, թոյլ չը տալով իր գործունէութեան մէջ երկրութիւն, անորոշութիւն և մի ձեռքով երկու ձիերուկ բռնելու կամ մի հարուածով երկու թռչուն սպանելու քաղաքականութիւն։ Այդպէս չէ սակայն Թիֆլիսի թեմական յօբելեանական յանձնաժողովը։ Նա մի տարօրինակ մարմին է. ստեղծվել է կամ, աւելի ճիշտն ասած, վիժել է տարօրինակ պայմաններում, ուստի և տարօրինակ գործելակերպ է ընդդրկել, կէս յայտնի, կէս խլուրդային գործելակերպ։ Նախ, յայտնի չէ մինչև այսօր, թէ հաստատվե՞լ է նա կաթողիկոսական կոնդակով թէ՞ ոչ։ Որքան մեզ յայտնի է, այդպիսի հաստատութիւն մինչև այսօր չը կայ. (ընդունենք մի բոպէ, որ նա պէտք չէ զգում կաթողիկոսական հաստատութեան, ինչպէս մատնում է և նրա նախագահ Մեսրոպ եպիսկոպոսը. այդ դէպքում, ինչու է նա դիմել և խնդրել կաթողիկոսական հաստատութիւն)։ Երկրորդ՝ նա ընդդրկել է մի գործունէութիւն, որի կէսը հրապարակային է, կէսը խլուրդային։ Եւ այդ հրապարակային-խլուրդային գործելակերպը պարզ մատնում է տարօրինակ թեմական յանձնաժողովի անդամների և նախագահի ներքին աշխարհահայեացքը և բարոյական սկզբունքը՝ լինել արտաքուստ բարեկամ, ներքուստ թշնամի։ Յանձնաժողովը պաշտօնապէս դպրոցական ֆոնդի հաւար է հանգանակութիւն սկսել, բայց ոչ-պաշտօնապէս՝ իր անդամների և «Հօրիզօն» թերթի միջոցով աշխատում է նաև, և աւելի, զրական ֆոնդի համար։ Եւ ահա լսենում են այսպիսի դիմումներ.

— Դուք մատդիր էք մի որևէ նուէր տալ յօգուտ դպրոցական ֆոնդի, չէ՞։

— Այո։

— Լաւ չէ լինի, որ կէսը տաք յօգուտ դպրոցական ֆոնդի, կէսը՝ յօգուտ զրական ֆոնդի։

— Բայց չէ՞ որ Կաթողիկոսի կոնդակը և թոյլտուութիւնը միայն դպրոցական ֆոնդի մասին է։

— Հոգ չէ, զրական ֆոնդն ևս հաճելի է։

Եւ հետևանքը այն է լինում, որ մէկը ևթէ կամենում է տալ 1000 կամ 2000 ր. յօգուտ դպրոցական ֆոնդի, տալիս է կէսը, պահելով միւս կէսը կամ խոստանալով զրական ֆոնդի հաւար։

Մենք ամենևին չենք զարմանում յանձնաժողովի անդամների այսպիսի գործելակերպի վրա. նրանք այն անձինք են, որոնք սկզբից ի վեր դէմ էին դպրոցական ֆոնդին, իսկ յետոյ, տեսնելով որ անկարող են խանգարել և արգելք լինել, բարւոք համարեցին կեղծել, համակերպել, որպէսզի կարողանան գէթ խլուրդային եղանակով առաջ տանել իրանց ծրագիրը։ Այդ մարդիկ այնքան կուրացած են կրքից և յամառութիւնից, որ բնաւ չեն ուզում հաշտվել, թէ ոչ օր զրական ֆոնդի դէմ չէ, բայց քանի որ թոյլտուութիւն ստացված է և այս տարարված դպրոցական ֆոնդի մասին, պէտք է միահամուռ այժմերով աշխատել այժմ դպրոցական ֆոնդի համար, իսկ յետոյ, երբ այդ ֆոնդը իրագործվի, սկսել աշխատել միահամուռ զրական ֆոնդի համար, որովհետև այժմ դպրոցական ֆոնդի կողքին դնել և զրական ֆոնդը, որի համար ոչ միջնորդութիւն է եղել և ոչ ևս թոյլտուութիւն ստացվել, նշանակում է երկու ֆոնդերն ևս չլատել, խափանել և դրանով չնչին արդիւնք ստանալ։ Այդ պարզ տարամաբանութիւնը անկարող են հասկանալ յանձնաժողովի անդամները, որովհետև նրանք սկզբից հակառակ են եղել դպրոցական ֆոնդին. բայց շատ տարօրինակ է, որ այդ պարզ տրամաբանութիւնը չէ կարողանում հասկանալ թեմական առաջնորդը, որը պարտաւոր է ամեն կերպով այժ տալ կաթողիկոսական կոնդակին և դպրոցական ֆոնդին։ Շ.

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇՏԱԿԱՐԱՆԻՑ
III

Եգիպտոսի հայութիւնը ազատ Նեղոսի ափերից մի գեղեցիկ օրինակ է տալիս այսօր մեզ, հայկական կենտրոններում նըստածներիս, մի գեղեցիկ օրինակ համերաշխութեան, երբ ամբողջ կուսակցութիւնները, որոնց ծրագիրը, տակտիկան, ամբողջ գործունէութիւնը միշտ միմեանց հակառակ է եղել, այսօր ընդհանուր մի գործի օգտի համար մոռանալով անցեալի բոլոր գրգռութիւնները, կուսակցական պայքարը, ձեռք-ձեռքի են տալիս ընդհանուր այժերով ազգային մի գործ կատարելու համար։

Հայ իրականութեան մէջ այդ գրեթէ առաջին օրինակն է և այդ առաջին օրինակը տալիս է մեզ ոչ հայկական կենտրոններից մէկն ու մէկը, այլ հեռաւոր մի փոքրիկ գաղթականութիւն, Եգիպտոսի հայութիւնը։

Մի գեղեցիկ օրինակ է այդ մեզ համար, մանաւանդ մեզ, կովկասցիներիս, որ նոյնիսկ ազգային այնպիսի մեծ գործի առաջ, ինչպիսին է տաճարի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեանները, չենք կարողանում գլուխ խոնարհել, միանալ և ընդհանուր այժերով ազգային այդ մեծ ոգին յաւերժացնելու համար մի գեղեցիկ գործ ստեղծել։

Այո, զմայլելի է, Կովկասի հայութիւնը, որ ինքն իրան մեր ազգի առաջաւոր գունդն է համարում, դեռ շատ բան ունի սովորելու և օրինակ վերցնելու նոյնիսկ հայկական կենտրոններից, հազարաւոր վերստերի տարածութեան վրա ընկած գաղթականութիւններից։

Հայ թերթերի մէջ տպագրված է Եգիպտոսի ինքնապաշտպանութեան միջկուսակցական խումբի յայտարարութիւնը, ուղղված Եգիպտոսի հայութեանը։

Սրտի անհուն բերկրանքով է մարդ կարդում այդ տողերը, որոնց իւրաքանչիւր բառի տակ զգացվում է ազգային վշտի ու ցաւերի խոր զգացումնք և որոնք պէտք է ոսկի տառերով գրոշմված լինեն իւրաքանչիւր ազգային կազմակերպութեան գրասեղանի վրա։

«Հայրենակիցնե՛ր, հանրային հպարտութիւնով և սրտագին հաճոյքով մըն է, որ կուգանք յայտարարելու այս համերաշխութիւնը՝ իրրև քաջալերող նախանշան մը Եգիպտոսի հայ գաղութին քաղաքական զարգացմանը։

«Ներշնչուած այն մեծ պարտականութենէն, որ հայ դատին ներկայ պատմական բոպէին կը դնէ մեր ժողովրդեան բոլոր հատուածներուն և դասանունքներուն վրայ, և խորապէս գիտակից թէ որքան կարևոր է, այդ բացառիկ կարևորութեան հանդէպ, քաղաքական բոլոր ուժերուն ներդաշնակ համագործակցութիւնը, հայ կուսակցութիւններու Եգիպտոսի տեղական մարմինները՝ Դաշնակցութեան ենթակոմիտէները, Հնչակեան մասնաճիւղերը և Սահմանադիր-Ռամկավար ակումբները որոշեցին շաղկապել իրենց ուժերը, յանուն երկրի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան»։

Այսպէս է սկսում այդ յայտարարութիւնը, ուր մանրամասն բացատրված է միութեան նպատակն ու ձգտումները և որը վերջանում է հետևեալ ճշգրիտ ու գեղեցիկ նախադասութեամբ.

«Պառակտումները ուժեր վատնեցին։
Համերաշխումը ուժեր պիտի ամրացէ»։

Տասնեակ տարիների փորձերից յետոյ, հայը միայն այսօր է հասկանում, զգում, որ «պառակտումները ուժեր կը վատնեն», և այդ հասկացնում է մեզ Եգիպտոսի հայ գաղութը։

Հայի ազգային բոլոր գործերը միշտ պառակտումներն են կործանել, մեր ոյժերը միշտ պառակտումներն են չլատել և խաչընդոտ հանդիսացել ամեն մի գեղեցիկ գործի ու ձեռնարկութեան։

Դարերի ընթացքում մենք չենք կարողացել հասկանալ, ըմբռնել այդ հասարակ փիլիսոփայութիւնը և դեռ այսօր էլ շատ բռնկում ենք նոյն շաւղով ընթանալու։

Եւ պատիւ եգիպտահայ գաղութին, որ իր այդ գեղեցիկ քայլով մի փառաւոր ապտակ է հասցնում մեզ, կովկասեան հայ հասարակական գործիչներիս, որ ազգային մեծ կուլտուրական ոգին ենք ուզում տապալել մեր պառակտումներով։

Պառակտումները ուժեր վատնեցին։

Մթթէ Կովկասի հայ ինտելիգենցիան, հայ հասարակական գործիչները չը պէտք է երբեմ հասկանան այդ հասարակ ճշմարտութիւնը, և մթթէ գոնէ այժմ նրանք ամաչելով հեռաւոր Նեղոսի ափերում ցրված հայ գաղութներից ձեռք-ձեռքի տալով չը պիտի աշխատեն ընդհանուր այժերով ազգային մի մեծ գործ կատարելու։

Սպասենք և տեսնենք։

Վաղարշակ Թուխանեան

Բաքու

ՖԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լուսեր Սղնախի օրջանի

Սղնախ, 25 յունիսի

Վերջերս Վաքիրի գիւղի ծայրից մի 15 տարեկան տղայ գնում է Ալազան գետը ջուր խմելու։ Ցանկարծ ոտը սայթաքվում է և խեղճ տղան ընկնում է գետը և խեղդվում։ Մեռածի դիակը դուրս բերին Զաքաթալայի շրջանի մի գիւղի ծայրում։

Ամսիս 2-ին կայացաւ Սղնախի գաւառի գիւղատնտեսների ընկերութեան անդրանիկ ժողովը, որտեղ ընտրվեցին 20 հոգի վարչութեան կազմի համար։ Սղնախի գաւառը բաժանված է գաւառամասերի և իւրաքանչիւր մասից ընտրված են որոշ թիւով մարդիկ։

Սղնախում հիմնվեց երկրորդ կուրս։ Վերջերս տեղի ունեցաւ նոր կուրսի հիմնադիրը ժողովը, որտեղ ընտրվեցին վարչութեան և վերատուող յանձնաժողովի անդամներ։ Այս կուրսում մանակցում են գիւղաւորակս վրացիներ։

Գողութիւնները շարունակվում են։ Նորերս չարագործները կողոպտեցին Ս. Սարգսեանի խանութը, որտեղից տարել են փող, արծաթէ մի գօտի, որտղական հրացանը. ուրիշ բաներին ձեռք չեն տուել։ Գողերը պատը ծակել են լոմով և երկաթէ ըէլը կտրել։

Բօզբէ գիւղում մի մարդ գնում է դաշտ և ճանապարհին պատահում է մի շան։ Շունը յարձակվում է մարդու վրա, իսկ սա հրացանի կոթով հարուածում է շանը։ Այդ ժամանակ հրացանը տրաքվում է և գնդակը մանում մարդու կուրծքը և վիրաւորում։ Երկրորդ օրը վիրաւորվածը վախճանվեց։

Անագա գիւղի հասարակութիւնը վերջերս արտասահմանից ստացաւ կրկնացիր 8 թնդանօթներ։ Այս թնդանօթները շարեցին գիւղի ծայրերին և փորձի համար մի քանի անգամ արձակեցին։ Ամեն մի թնդանօթ մինչև Թիֆլիս հասնելը նստեց 180 ր., իսկ Թիֆլիսից մինչև նշանակված տեղը նոյնպէս առանձին ծախս կայ։

Մինչև այժմ Սղնախում կար 15 քաղաքապահ, որոնք ստանում էին ամսական 15 ռուբլի։ Այժմ քաղաքապահների թիւը կրճատված է, 15-ից դարձրել են 10։ Այսուհետև աւագ քաղաքապահները կը ստանան ամսական 23 ր. 50 կ., իսկ կրտսերները՝ 18 ր. 50 կ.։

Սղնախի ոստիկանական պրիստաւը կանչեց բոլոր վաճառականների և արհեստաւորների աւագերին և յայտնեց նրանց գաւառապետի կարգադրութիւնը, որով այսուհետև Սղնախում բոլոր խանութները և արհեստանոցները պէտք է բացվեն առ. ժ. 7-ին և փակվեն եր. ժամը 9-ին, իսկ կիրակի և ազգ օրերը պէտք է բացվեն առ. ժ. 7-ին և փակվեն ժ. 9-ին, 2 ժամ բաց պահելով։ Այս կարգադրութիւնը շատերին առնախրժ թւաց։

N. N.

Լուսեր Հին-Նախիջեւանի շրջանից

Հին-Նախիջեւան, 29 յունիսի

Քաղաքիս թուրքերի մասում ամսիս 25-ին սեղի է ունեցել մի քաջմեռելի բռնարարութիւն։ Քաղաքի ընակիչ Քերբալայի Ալի Մամի-օղլին, 22 տարեկան, խարելով վեց տարեկան Ալի Արդուլա-օղլին, կանչում է գոմը աւանակներին ջրի քշելու պատրուակով ու գոմում բռնարարում է վերջինին. սճիրը հատատվեց, յանցաւորը քնելիչ կարգադրութեամբ բանտարկվեց։

Քիչ առաջ նոյնանման դէպք տեղի էր ունեցել Ղարաչուղ թիւրք գիւղում. ընտանեքատէր ոճրագործը նոյնպէս բանտարկվեց։

Աստարաթ (Թաղա-գիւղ) հայաբնակ գիւղում յունիսի 30-ին թշնամութեան հողի վրա այրել են Տաճատ Ակոբեանցի ցորենի խուրձերը։ Վնասը 580 պուդ ցորենի է հասնում։ Ցանցագործը երևան չէ հանվել։

Նախիջևանի գաւառամաս Օրդուբաթում անյայտ պատճառներից կրակ է ընկել Մաշադի-Օրուջ Ալի Նաշֆովի շերամի գործարանը։ Այրվել է շերամ 10 պուդ և այլն. վնասը հասնում է 200 ռուբլու։

Երաշտը տիրում է։

Ա. Տէր-Ստեփանոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հայոց Դրամատիկական Ընկերութեան խորհուրդը որոշել է պակ գնել հանգուցեալ բեմական գործիչ Սարգարեան-Արևշատեանի գաղափարի վրա և ներկայ լինել թաղմանը։ Հայկական Դրամատիկ Խմբակցութեան (Ժողովրդական Տան) վարչութիւնն ևս որոշել է հանգուցեալ բեմական գործիչ Սարգարեան-Արևշատեանի թաղմանը ներկայ լինել ամբողջ կազմով և սեպտեմբերին հերթական երեկոյթներից մէկը ժողովրդական Տանը նուիրել հանգուցեալի յիշատակին։

◆ Թիֆլիս քաղաքին ջուր մատակարարելու հարցի առիթով ընտրված բիւրօն վերջնականապէս հաշուել է, որ Ծալկայի աղբիւրներից ջուր անցկացնելու հետազօտութիւնների համար կը հարկաւորվի 25,000 ռուբլի, Նատախտարի աղբիւրների ուսումնասիրութեան՝ 40,000 ռուբլի, իսկ Աւճալայի ջրանցքի ընդարձակման ուրուագիծը կազմելու համար՝ 15,000 ռուբլի։

◆ Քաղաքային վարչութիւնը նորից առաջարկել է էլեքտրաքարշի վարչութեանը շարունակել էլեքտրաքարշի գիծը Օրթաճալայում մինչև նահանգական բանտը։

◆ Մեզ հաղորդում են, որ պրոֆեսոր Լէմուանը, որը եկել էր Մոսկվայից Թիֆլիս՝ մասնակցելու ընտրողների XIII համագումարին և յետոյ գնացել էր Ալէքսանդրօպոլի ցուցահանդէսը, վերադարձին կանգ է առել Մեծ-Ղարաքիլիսայում և այնտեղի կամնատնտեսական կուրսերում կարդացել է երկու դասախօսութիւն ունկնդիրների համար։

◆ Մեզ հաղորդում են, որ այս տարի ամառը գիտական նպատակներով մեր երկիրն է գալու գերմանական պրոֆեսոր Աուերբաքն ուսումնասիրելու մեր երկրի անտեսական կեանքի մի քանի կողմերը։ Նրա ճանապարհորդութեան ծրագրի մէջ մտնում են Քութայիսի, Թիֆլիսի և Երևանի նահանգները։

◆ Մի քանի օրից յետոյ երկրագործութեան մինիստրի կովկասեան լեռագօր Կ. Շաշկովսկին կատարելու է մի ճանապարհորդութիւն դէպի Երևանեան նահանգը։ Նա կայցելէ Մեծ-Ղարաքիլիսան, Դիլիջանը, Սևանայ լիճը, Երևանը, Նախիջևանը, Կարսը, Արդահանը։

◆ Մեզ հաղորդում են, որ Մ.-Ցովհաննեան դպրոցի հոգաբարձութիւնը յուլիսի 3-ի նիստում որոշել է հրաւիրել Լ. Պարոնեանին ռուսաց լեզուի և ռուսաց պատմութեան 28 դասի համար, Հ. Ցովհաննիսեանին հայերէնի և հայոց պատմութեան 24 դասի, Գ. Իլիկեանին ֆրանսերէնի 10 դասի, Հ. Մուսայէլեանին ընդհանուր պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան 20 դասի, Մ. Վանեցեանին (Վալադեան) ընդհանուր աշխարհագրութեան 12 դասի, Մուշեղեանին թւաբանութեան, երկրաչափութեան, տիեզերագրութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան 21 դասի, Ց. Թումանեանին (Սուրխաթեան) ընդհանուր գրականութեան 4 դասի և Մարգարեանին դիպակտիկայի և ընդհանուր մանկավարժութեան 4 դասի։ Բոլորը ունեն բարձրագոյն կրթական ցեղագ։ Վերակացուհու պաշտօնի համար հրաւիրված է օր. Լ. Աղայեանը (Դ. Աղայեանի դուստրը), գիմնազիաստուհի։ Դեռ ազատ են մնում երգեցողութեան, նկարչութեան և ձեռագործի դասերը։

◆ «Закавказье» լրագրի յուլիսի 4-ի համարում Մարգարեանի վատնումի վերաբերմամբ լոյս տեսած յօդուածի առիթով քաղաքային վարչութեան գլխաւոր կնտրողիոր Տէր-Դաւթեանը գանգատ է ներկայացրել նահանգական դատարանի դատախազին յեղեալ թերթի խմբագիր Բաղդասարեան քրէական պատասխանատուութեան ենթարկելու դիֆֆամացիայի համար։

◆ Երդուեալ-հաւատարմատար Ր. Քաթանեանցը նուիրել է քաղաքային թանգարանին յայտնի հայ հրապարակախօս Ստեփաննոս Նազարեանի 35 ձեռագիր նամակները հայերէն լեզուով։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ ոստիկանութեան պահանջները կատարելու մասին սահմանված պարտադիր որոշումները խախտելու համար տուգանված են պանդոկատէր Աւետիք Շեխինով և գինետուն պահողներ Գէորգի Սանդօֆիաշվիլի, Վասիլի Զանաշվիլի, Իվան Սահակով, Գէորգ Միրաքով, Նիկոլայ Կօրանիձէ, Բօժէն Միրինաշվիլի, Ալէքսանդր Լազարաշվիլի և բուֆէտչիկ Բօժէնի Օրալիաշվիլի՝ 50-ական ռուբլով։ Վճարելու անկարողութեան դէպքում իւրաքանչիւրը պիտի կալանաւորվի երկու շաբաթով։

◆ Թիֆլիսի դերձակները հիմնում են արհեստակցական միութիւն։ Վաղը, յուլիսի 7-ին, Զուբալովի անուան քաղաքային ժողովրդական Տանը հիմնադիրների ժողովը քննելու է կանոնադրութեան նախագիծը։

◆ Կայսերական Մոսկվայի Հնագիտական Ընկերութեան կովկասեան ճիւղի անդամ Ս. Տ. Տէր-Աւետիսեանը ուղարկվում է Երևանեան նահանգի Օրդուբաթի շրջանը հին Խարաբա-Գիլան քաղաքի աւերակները ուսումնասիրելու և պեղումներ կատարելու համար։

◆ Այսօր Թիֆլիսի բօրսային կոմիտէի նախագահ Ա. Ե. Միրիանը մեկնում է Թիֆլիսից արձակուրդով։ Նրան ժամանակաւորապէս փոխարինում է Ա. Ա. Լենֆիաեանցը։

◆ Յուլիսի 14-ին Թիֆլիս կը վերադառնան արձակուրդից քաղաքային վարչութեան անդամներ Ա. Մ. և Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկները։

◆ Նահանգապետը հաստատել է քաղաքային դումայի որոշումը՝ Գիգօլովի, Վահանեանցի և Աղայէվայի հողամասերը քաղաքի համար գնելու մասին։ Այդ հողամասերի վրա կառուցելու են շէնքեր քաղաքային դպրոցների համար։ Գիգօլովի հողաբաժնի վրա, որը գտնվում է Հաւլաբարում, պէտք է շինվի Շիօյէվայի անուան հիմնական դպրոցի շէնքը։

◆ Քաղաքային դումայի ձայնաւորների և 5-րդ ու 6-րդ քաղաքամասի մի խումբ ընտրողներ միջնորդութիւն են զարթեցրել քաղաքային վարչութեան առաջ էլեքտրաֆիկայա փողոցում գտնվող հասարակաց անոցը փակելու մասին։

◆ Քաղաքային ինքնավարութիւնը վերջերս միջնորդութիւն էր զարթեցրել Թիֆլիսում նօտարական գրասենեակների թիւը աւելացնելու մասին։ Այդ առիթով նահանգապետը դիմել է Թիֆլիսի դատաստանական պալատի նախագահին՝ խնդրելով նրան յայտնել իր կարծիքը այդ միջնորդութեան առիթով։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատանը յուլիսի 3-ից պարապմունքները վերջանում են ցերեկվայ ժամը 2-ին։

◆ Նահանգապետը առաջարկել է քաղաքային վարչութեանը շտապիտ շէնք յատկացնել Թիֆլիսի 3-րդ ոստիկանամասի համար։ Այդ նոր շէնքը ի միջի այլոց պէտք է ունենայ յատուկ բաժանմունք նաև ոստիկանամասում ժամանակաւորապէս կալանաւորվողների համար։ Քաղաքի առարկութիւնը այս վերջինի բաժանմունքի առիթով, թէ ինքը պարտաւոր չէ այդպիսիների համար շինութիւն յատկացնել, նահանգապետի կողմից թողնված է անհետևանք։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սլէպցօվսկայա Ներքափողոցի վրա № 3 տան մէջ ապրող Շուշի քաղաքի բնակիչ Սերգեյ Միրզոյէվիչ Վարանցովը յայտնել

է ոստիկանութեանը, որ յուլիսի 3-ին, առաւօտեան ժամը 11-ին, մի անյայտ չարագործ կրակելով գլխաւոր մուտքի դրան շրջթան՝ ներս է մտել իր կացարանը և գողացել տնային զանազան իրեր 230 ռուբլու արժողութեամբ։ Կասկածի հիման վրա կալանաւորված է Թիֆլիսի քաղաքացի Նիկոլայ Յարութիւնեան Կարապետեանցը։

◆ Ելիսաւետինսկայա փողոցի վրա № 31 տան մէջ ապրող Ելենա Նիկոլայէվնա Եարալեանը յայտնել է ոստիկանութեանը, որ իր բացակայութեան միջոցին Թիֆլիսից, իր ընակարանից գողացել են ոսկէ ուարծաթէ իրեղէններ 203 ռ. արժողութեամբ։ Եարալեանը կասկած է յայտնել, որ այդ գողութիւնը կատարել է նոյն տան նախկին դռնապան, Երևանի գաւառի Զինջիրլի գիւղի ընակիչ Օվակիմ Սաֆարովիչ Ստեփանեանը։ Վերջինս մնդում է իր անմեղութեան վրա։

◆ Յուլիսի 3-ին Թիֆլիսի 3, 5, 6, 8 և 10-րդ քաղաքամասերում ոստիկանութիւնը շուրջկալի միջոցին կալանաւորել է անցագիր չունեցողներ 53 հոգի և մուրացկաններ՝ 2 հոգի։

◆ Յուլիսի 4-ին Կուրի ափին ոստիկանութիւնը կալանաւորել է Թիֆլիսի քաղաքացի Իլարիոն Մաճավարիանին, որը ատրճանակաձև կարգով արտաքսված էր Կովկասի սահմաններից 5 տարի ժամանակամիջոցով և ինքնակամ վերադարձել էր նորից։ Մաճավարիանին պատ. օրէնք. 63-րդ յոդուածի հիման վրա պատասխանատուութեան ենթարկվելուց յետոյ՝ նորից կաքսորվի Կովկասի սահմաններից դուրս։

◆ Միքայէլեան փողոցի վրա № 112 տան Մարիա Պաւլովնա Ծորժօլանիի գալանտերի կրպակից յուլիսի լոյս 3-ի գիշերը բակի ներսից անյայտ չարագործներ մտել ու գողացել են բաց դրամարկղից 48 ռ. կանխիկ դրամ և զանազան ապրանքներ 686 ռուբլու արժողութեամբ։

◆ Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Յակոբ Ալէքսանդրովիչ Դանդուրեանը յայտնել է ոստիկանութեանը, որ 10 ամսվայ ընթացքում սիստեմատիկ կերպով գողացվել են զանազան ամանեղէններ Երևանլիմկայա փողոցի վրա № 5 տանը գտնվող իր խանութից մօտ 600 ռուբլի արժողութեամբ։ Կալանաւորված է Դանդուրեանի գործակատար Մուռատաֆա Ֆազլոտինով Օսխանովը, որի մօտ խուզարկութեան միջոցին գտել են 100 ռուբլու ամանեղէններ Դանդուրեանի խանութից։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ՁԱՒԱԿ, ԵՐԵԽԱՑ, ՈՐԴԻ

Ստ. Մալխասեանցը «Մշակի» № 103-ի իր բացատրութեան մէջ ասաց. «Զաւակ, որդի, երեխայ» բառերից մէկը ցոյց չէ տալիս անպատճառ արական սեռ։ Բայց միևնոյն ժամանակ աւելացնում է. «Սրանցից «որդի» բառը աւելի կարող է հասկացվել արու զաւակի նշանակութեամբ»։ Վերջին յաւելուածը ապացուցված չէ փաստերով։ Իսկ Մոծակը «որդի Դաւթի, որդի Աստուծոյ» բառերով ուզում է ապացուցանել, որ «որդի» անպատճառ արական սեռին է պատկանում։ Եթէ Նազարէթցի Մարիամը մի աղջիկ էլ ունենար, նա էլ կը կոչվէր «որդի Դաւթի, որդի Աստուծոյ»։

Բայց որովհետև ես «Մշակի» № 103-ում խոստացել եմ յայտնել իմ տպաւորութիւնը, ուրեմն պիտի կատարեմ իմ խոստումը, ես «որդի» բառը երբէք չեմ ընդունում անպատճառ արական սեռ հետևեալ փաստերով ու վկայութիւններով։

Սաղմոսից. «Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն և նետք են...»։

«Որ ինչ մի անգամ պատուիրեաց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց իւրեանց»։

«Եղիցի աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ»։

«Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց»։ «Եւ արդարութիւն Աստուծոյ յորդւոց մինչև յորդիս»։ «Որդիք նորա մուրազք եղէցին»։ «Եւ զերկիրս ետ որդւոց մարդկանց»։

Հին-Ուխտից. «Պատուիրեա որդւոցն Իսրայէլի և ասասցես ցնոսա»։ «Ելին ամենայն որդիքն Իսրայէլի»։ «Եւ ասեն Ահարոն և Մովսէս ցամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի»։ «Ո՛ որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց»։ «Հարք, մի զայրացուցանէք զորդիս ձեր»։

Աւետարանից. «Ո՛ իցէ ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, մի թէ քար տայցէ նմա»։ «Գիտէի պարզեա տալ որդւոց ձերոց»։ «Եւ Մովսէս ասաց ցորդիսն Իսրայէլի»։

Ներսէս Շնորհալին գրում է. «Զարթիք, որդիք լուսոյ»։

«Ծնաւ նոր արքայ ի Բէթղեհէմ քաղաքի, որդի՛ք մարդկանց, օրհնեցէք...»։

Մաշտոցից պսակման ժամանակ քահանան պսակվողներին ասում է. «Որդեակք, ստուգապատուի հրամանաւ եկեալ էք ի սուրբ եկեղեցիս» և այլն։

Յետոյ հարցնում է միայն փեսային. «Որդի՛, մինչև մահ տէր ես»։

Հարցնում է միայն հարսին. «Որդեակ իմ, և դու մինչև մահ տէր ես»։

Ժողովրդին դիմենք. «Աստուած որդիքդ զօրացնէ»։ «Օխտը որդւով սեղան նստիս»։ «Իմ որդիներիս մէջ ամենաիւղքը Շուշանիկն է»։

Կարելի է այսպէս ասել. «Գրիգորը որդի չունի, միայն երկու աղջիկ ունի»։ «Արշակի որդիքը մեռան, աղջիկերքը մնացին»։

Հերձա բոլոր օրէնքների և վկայութիւնների մէջ «որդի» բառը ոչ մի տեղ անպատճառ տղամարդ չի ցոյց տալիս։ Ահա այդ հիման վրա ես էլ Ս. Մալխասեանցի հետ կրկնում եմ, որ «զաւակ, երեխայ և որդի» բառերից ոչ մէկը անպատճառ արական սեռ ցոյց չի տալիս։

Այժմ հերթը Գ. Տէր-Ռուբինեանցինն է, թող ապացուցանէ, որ «որդի» անպատճառ տղամարդ կը նշանակէ։ Վէճը այս երկուսիս մէջն է։ Սարիբէգ-Տէր-Մելքիսեդեկեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Լեհական անկախութեան ժամանակաւոր մամուժողովի կողմից մի պատգամաւորութիւն է գնացել Լօնդոն՝ միջնորդելու դեսպանների խորհրդակցութեան առաջ լեհական ուրոյն թագաւորութիւն վերակազմելու մասին։ Պատգամաւորութիւնը, «Н. Вр.»-ի ասելով, ոչ մի համակրութիւն չէ գտնում։ Այդ կոմիսիայի քարտուղար Վիտօյլէ Իոգէոն և նրա ընկերակիցները առանձնապէս պահանջում են մտցնել Լեհաստանում ընդհանուր ուղղակի ձայնատուութեան իրաւունք, նշանակել Լեհաստանում պետական պաշտօնեաներ միայն ընկի լեհացիներից, նորակոչ լեհ զինուորներին բացառապէս թողնել ծառայելու իրանց ծննդավայրերում, և վերջապէս վերացնել հրէաների վերաբերեալ կայացրած բոլոր առանձին որոշումները։

◆ Պետերբուրգի գործարաններից և արհեստանոցներից շաբաթում յուլիսի 1-ին տեղի են ունեցել գործադուլներ, տեղ-տեղ նոյնիսկ միտինգներ և ցոյցեր։ Գործադուլը քաղաքական բնոյթ է ունեցել. գլխաւոր շարժառիթ եղել են այն ըէպրէսիաները, որոնց ենթարկվում է բանուորական մամուլը։ Գործադուլը անապասելի լինելու պատճառով ոստիկանութիւնը բացակայ է եղել։

◆ Պօստ - հեռագրական գլխաւոր վարչութիւնը որոշել է վերացնել քաղաքային «ցպահանջ» նամակները, որովհետև նրանցով օգտվում են շատ յաճախ շանտաժի ու անբարոյական նպատակների համար։

◆ «Нов. Вр.» և «Рѣчь» լրագիրներին հեռագրում են Բելգրադից, որ Բոլգարիան համաձայն է խաղաղ բանակցութիւններ սկսել Սերբիայի և Յունաստանի հետ անմիջական կերպով։

◆ Բելգրադից հաղորդում են, որ իբր Սերբիան պաշտօնապէս առաջարկել է Բոլգարիային արտաքսել Ֆերդինանդ թագաւորին և գահաժառանգութեան իրաւունքից զրկել Կօբուրգների հարստութիւնը առհասարակ, սպառնալով Բոլգարիայի բացասական պատասխանի դէպքում շարունակել պատերազմը, մինչև որ սերբ զօրքերը մտնեն Սօֆիա և իրանք արտաքսեն Կօբուրգներին։

◆ Բերլինից և Վիէննայից ստացված լուրերի համաձայն, Սերբիայի մինիստր-նախագահ Պաշիչը և Յունաստանի մինիստր-նախագահ Վենիզելոսը յայտարարել են ժուրնալիստներին, որ պատերազմը դադարեցնելը հնարաւոր է այն դէպքում միայն, եթէ Բոլգարիան խոստովանվի իր յաղթված լինելը և ինքը խնդրի հաշտութիւն։

◆ Հօմից հեռագրում են, որ Իտալիան, Ռուսաստանը և Գերմանիան առաջարկել են Բումինիային դադարեցնել յարձակումը Բոլգարիայի վրա։

◆ Պետերբուրգի դիպլոմատիական շրջաններում խօսում են, որ Սերբիան և Յունաստանը մերժել են ընդունել ռուսական առաջարկը՝ իրանց և Բոլգարիայի միջև միջնորդ հանդիսանալու մասին։ Հաւանական է, որ Ռուսաստանը զինուորական ոյժի օգնութեան դիմէ յամառող սերբերին և յոյներին ներգործելու նպատակով։

◆ Սերբիան և Յունաստանը պատասխանել են Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միացեալ առաջարկին, որ հաշտութիւնը կը կայացվի պատերազմի դաշտում։

◆ Վիէննայից հեռագրում են, որ բումինական զօրքերին հրաման է տրված գնալ ուղղակի Սօֆիա։

◆ Սօֆիայի ֆրանսիական դեսպանը իր կառավարութեան յանձնարարութեամբ խորհուրդ է տուել Սօֆիայի կառավարութեանը՝ հաշտութեան բանակցութիւններ սկսել Սերբիայի, Յունաստանի և Բումինիայի հետ։

◆ Աւստրիան տեղեկացրել է Սերբիային, Յունաստանին և Զերնոգօրիային, որ պատերազմը Ալբանիայի սահմանները փոխադրելու դէպքում՝ Աւստրիան և Իտալիան իսկոյն կը գրաւեն Ալբանիան։ Բացի դրանից՝ Աւստրիայում անհրաժեշտ են համարում կօնդրես գումարել բալկանեան երկիրները բաժան-բաժան անելու համար։

◆ Վիէննայում աշխատում են թշնամական տրամադրութիւն առաջ բերել Ռուսաստանի դէմ և միաժամանակ առաջ են քաշում եւրօպական կօնֆերէնցիա հրաւիրելու հարցը։

◆ Վիէննայից հեռագրում են, որ այնտեղ ստացված լուրերի համաձայն, Սօֆիայում լուրջ անկարգութիւններ են տեղի ունենում։ Ամբոխը ջարդապատել է մինիստրութիւնն ու ոստիկանքը։ Դանէվի վրա գնդակներ են արձակել։ Ֆերդինանդ թագաւորը լուրջ կերպով հիւանդացել է։ Հաւանօրէն զինուորական դիկտատուրա կը նշանակվի։ Լուրերը համարվում են չափազանցված։ Բերլինից ևս հաղորդում են միևնոյն անկարգութիւնների մասին, նոյնպէս նկատելով լուրերի չափազանցված լինելը։

◆ «Matin» լրագրի ասելով Պարիզում լուր է ստացված, որ Բոլգարիան համաձայնվել է Ռուսաստանի պայմաններին։ Վերջինս առաջարկում է իբրև սահման Վարդարի, Զէվգելի և Սարումայի հովիտը, վերապահելով Յունաստանին Սերեսը, և Բոլգարիային՝ Կավալա-Էյնօսը։

◆ Բոլգարական-մակեդօնական երկու զօրաբանակների ընդհանուր հրամանատար է նշանակվել Սավովը։

◆ Բոլգարական կառավարութիւնը վճռել է ոչ մի ընդդիմութիւն չը ցոյց տալ թիւրքերին, եթէ վերջիններս պատերազմական գործողութիւններ սկսելու լինեն Էնօս-Միդիայի գծից անցնելով։ Բոլգարիան յոյս ունի, որ մի քանի դիրքեր գրաւելուց յետոյ թիւրքիան յետոյ պատերազմական գործողութիւններ կը սկսի յոյների դէմ։

◆ Սալոնիկում 5000 հոգուց բաղկացած թիւրքերի և հրէաների միութիւնը մի բանաձևով բողոքում է բոլգարացիների գործած գազանութիւնների դէմ։

◆ Վիէննայի լրագիրների ասելով հաստատվում են Բոլգարիայում սկըսված անկարգութիւնների լուրերը։ Գիւղերում սով է տիրում։ Եղել են սովից ապատմբելու դէպքեր։ Զօրքի մէջ տիրում է անհնազանդութիւն։ Օֆիցէրները երկիւղից փախչում են։ Արքայական պալատը պահպանվում է ուրիշ պահակախմբերով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

3 յուլիսի

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ։ Ծովային դատարանի որոշմամբ՝ նաւատի Կուլէմինը, 1905 թէին «Պոտեմկին Տաւրիչեսկի» զրահանաւի նաւաստիների դէմ եղած ապատմբութեանը մասնակցելուն համար, դատապարտվեց 3 տարի կալանաւորական բաժանմունքում մնալու։

ԳԻՒՏԵՐԲԵՐԳ։ Զինուորական օդաչու Շտոլը ցած իջնելիս կապ տաճարի գմբէթին, ընկաւ ու չարդվեց։

ԿԻԵՎ։ Մանաւոր տան մէջ երևան հանվեց Տաւրիկեան նահանգի կողմից ընտրված Պետական Դումայի անդամ Բուտեանովի կողմից հրաւիրված ապօրէն ժողովը՝ քննելու բանտարների վիճակը և պետական հարցեր։ 16 հոգի կալանաւորվեցին և նահանգապետի կողմից ենթարկվել են 2 շաբաթից մինչև 3 ամիս կալանաւորութեան։ Բուտեանովը ենթարկվում է օրէնական պատասխանատուութեան։

ՍՄՈԼԵՆՍԿ։ Յուլիսի 3-ին Ալէքսանդրօվական երկաթուղագծի Իզդէշչիսլօ-Դուբրօվկայանի մօտ գնացքների ընդհարումից խորտակումն տեղի ունեցաւ։ Կան մարդկային զոհեր։

ԼՕՆԴՕՆ։ Դուբլինի գլխաւոր պօստատանը պատուիրված արկղիկում, որի մէջ պէտք է լիներ ապարանքներ 1.250,000 ֆրանկ արժողութեամբ, հայտնաբերված լօնդոնեան ոսկերչատներից մէկի անունով, ընդունելուց պարզվեց, որ շաքար է։ Կնիքին ձեռք չեն տուել։

ՄՕՍԿՎԱ։ Մանաւոր աշխատանքի նպաստող ընկերութիւնների ներկայացուցիչների համագումարում տեղի ունեցան մի շարք միջադէպեր, որոնք առիթ ծառայեցին փակելու համագումարի ընդհանուր ժողովը։

4 յուլիսի

ՐԻԳԱ։ Ֆէնիքս գործարանը փակված է անորոշ ժամանակով բանուորների գործադուլի պատճառով, որոնք պահանջում են աշխատավարձի յաւելումն։

ՇԱՆԽԱՅ։ Հաղորդում են, որ հարաւային զօրքերը յաղթեցին հիւսիսայիններին։ Նանկինը անձնատուր եղաւ առանց կռիւ։ Զօրքերի հրամանատարութիւնը տատանվեց գնել Լանսինգը։ Շանխայում իր մէջ հանգիստ է, բայց սպասում են, որ յարձակումն կը գործեն զինապահեստի վրա։

ՊՕԼՏԱՎԱ։ Կօբելեակի գաւառում կարկուտից վնասվել են հացաբոյսի արտերը։ Վնասը 144,000 ռուբլու է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրովարտակով՝ ուղղված կառավարչական սենատին ներկայ յուլիսի 4-ից՝ պաշտօնապէս ընդհատված են Գեռական Խորհրդի պարապմունքները և կը վերսկսվեն ներկայ տարվայ նոյեմբերի 1-ից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թի տպրելի 18-ից մինչև 1914 թ. տպրելի 17-ը։ (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եալոխ 4 ժ. 31 ր., Հաջի-Կարուլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստաստր գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եալոխ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կարուլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. երբ.։ Մարդատար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եալոխ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կարուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. երբ., Եալոխ 5 ժ. 19 ր. երբ., Հաջի-Կարուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Պօստաստր գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 56 ր. երբ., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 7—4 ժամ 40 ր. երեկվա, հասնում է Միխայլօվո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդատար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՎԱՆ.—Պօստաստր գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. երբ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց նշան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. երբ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագոնները)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. երբ., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. երբ., Երևան 1 ժ. 33 ր. երբ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. երբ., Կարս 4 ժ. 18 ր. երբ.։

ԲՈՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. երբ.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. երբ., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. երբ., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒՆ.—Արագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Պօստաստր գնացքը № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացքը № 7—3 ժ. 53 ր. երբ.։ Խառն գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պօստաստր գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդատար գնացքը № 8—5 ժ. 54 ր. երբ.։ Մարդատար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՎԱՆԻՑ.—Պօստաստր գնացքը № 4Ա/3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 26/25—(II և III կարգի վագոնների)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացքը № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Սմեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՅՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱՂԱՍԻԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։

Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։

Զ. Ի. ԲՈՐՈՆԵՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկատ.։

Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկատ.։ Աչքան, մէզի, խոլի հետազօտութիւն։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—71

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տանակերտ գիւղի (Երևանի նահանգ, Նախիջևանի գաւ.) ծխ. դպրոցի համար հարկաւոր է

ուսուցիչ և ուսուցչուհի

Դիմել՝ Баку, Армянское Человѣколюбивое О-во Гарегину Теръ-Степаняну.

(օ.մ.) 549. 2—1

ՀՈՅԹԱՑ գիւղի եկեղ.-ծխ. միդասեան դպրոցի համար հարկաւոր է մի փորձված

ՈՒՍՈՒՑԻՉ

ճեմարանական կամ թեմականաւարտ, որը ծանօթ լինի և եկեղեցական երգեցողութեան։ Ռոճիկ 500 ռուբլի, լուսաւորութիւն, վառելիք, սենեակ և ճանապարհածախս 15 ռուբլի։ Դիմել՝ Черезъ Туапсе (Черном. губ.) Сел. Гойти Арм. церк.-прихопечительству.

օ.մ. 550. 4—1

Կախ-աւանի ծխական դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ՀԱՄԱՐ։

Պայմանների համար պէտք է դիմել՝ Кахи, Закат. окр. Попечительству Кахск. Арм. церк.-прих. училища.

օ.մ. 543. 3—3

Սամարղանդի ծխ. դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

18—20 դասով։ Պատրաստում է երգեցիկ խումբ։ Կը տանայ 600 ռուբ. ռոճիկ, ճանապարհածախս, և կաղմած համերգների զուտ արդիւնքից 15%։ Դիմել քահանային այս հասցէով. Самаркандъ. Армянскому священнику.

(օ. մ.) 541. 4—3

ՊԱԼԱՍ-ՀՕՏԵԼ

ԼՕԶ

Նորագոյն առաջնակարգ հիւրանոց

150 շքեղ կահաւորված հարարներ

1 ր. 50 կ-ից սկսած

Առանձին ուշադրութիւն է դարձված օրինակելի մաքրութիւն, անդորրութիւն և կարգ ու կանոն պահպանելու վրա։

(Հ.Շ.) (Л. 12046) 8—1

Լոյս տեսաւ

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

„ԷՍՔԻԶՆԵՐ“

գիրքը։

187 երես։ ◆ Գինն է 50 կոպ։

Ծախվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում։ (օ.մ.) 542. 5—3

ՀԱՒԱՏԱՐՄԱԹՈՒՂԹ,

որ տուած ունէի Միխայիլ Ղազարովին իմ առևտրական գործերը վարելու համար յունվարի 1-ից 1911 թուից և վաւերացված նոտար Միքայէլեանից № 1417 բլանկով համարել

ՈՉՆՉԱՑՎԱԾ և ԱՆՎԱՒԵՐ։

Գրիգոր Բէվազեան

օ.մ. 543. 3—3

95 ԿՕՊԵԿՈՎ

ՄԵԾ ՀԻԱՑՄՈՒՆՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ

ՏՆԱՑԻՆ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐՔՈՑԿԸ

Այս գրքոյկով իւրաքանչիւրը կարող է դուշակել այլոց մտքերը, տեսնելիք առաջացնել, իմանալ ով ում է սիրում, ամենքի անունը։ Օգը պայմ կարելի է գարձնել, իսկ ջուրը գինի։ Մագնիսի խորհուրդները և գաղտնիքները վերջապէս բացված են։ Վարագոյրը ընկել է վերջապէս և այժմ կարելի է վերցնել շինացած երկաթը մերկ ձեռքերով, մեկ մեկը լեզուի մէջ ծակել իրան սրով, ցուցադրել կարած թասով գլուխը և ինքն իրան անխոցելի դարձնել։ Ջուրդրամի վերածելու արուեստ։ Բնակարանը վայրկենապէս լցնել ջրով կամ մառախուղով, բազմաթիւ այլ շլացուցիչ փօկուսներ։ Փօկուսների ժամանակ ամեն տուն կարելի է վերածել կախարդված ամրոցի։ Գինը 95 կոպ.։ Ուղարկ. է վերադիր վճ.։ Առաքման և վերադիր վճ. համար աւելորդ հաշվեմիտ 25 կ.։ Զգուշացէք կեղծիքներից։ Նորագոյն հրատ.։ Լրացված 272 էջ և բազմաթիւ նկար.։ Т-во «Заря», Варшава, отд. 92.

(16,27) (В. 40602) 3—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный